Գիրք LXVI

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 9—10 ՆՈՅ.-ԴԵԿՏ.

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրաշարժ տպարան Օր. Ն. Աղանեանի, պօլից., 7.
1910

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր. վեհ. Իզմիրլեանի . . . . . . . . . . . . . 3
Հանգիստ ամենայն հայոց վեհ. և սրբ. հայրապետ Տ. Տ. Մատթէոս Բ.-ի . . . . . . . . . . . . . . . . . 5
Ճշմարտութեան գինուորին. Բանաստ. Յ. Պետրոսեան . 9
Տ. Կիրակոս Ա. Վիրապեցի. Մաղաքիա արքեպս. Օրմանեան . . . . . . . . . . . . . . . . . . 10
⁂ Բանաստ. Յ. Պետրոսեան . . . . . . . . . . 19
Պատմութիւն Սասունեանց. Պրոֆ. Կրիմսկու. Մ. Ծովրեան 20
Ղուկաս Կաթուղիկոսի կանոնական թուղթ հայրապետական ընտրութեան մասին. . . . . . . . . . . 42
Նորագոյն պատմագիտութիւն, Կարլ Լամպրեխտի. գերմ. թարգմ. Pessimist . . . . . . . . . . . . . 51
Գարնան չտեսած։ Բանաստ. Արամ Վերղեան . . . . 69
Միակ ելքը Mars . . . . . . . . . . . . . . . . . 70
Խրիմեան Հայրիկի նամակներ . . . . . . . . . . . 76
Զգոյշ պէտք է լինել. Mars . . . . . . . . . . . 78

### ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Կարելի՞ գիտը կեանքը արհեստապէս պահպանելու։— Թոքախտի նոր միջոց։— Նոր դեղ թոքախտը բուժելու. Օր. Ն. Աղանեանց . . . . . . . . . . . . . 84

### ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Բառգիրք լատիներէն և օտարազգի դարձուածների, Վարդգէս Աղանեանցի, Ն. Յարոյ։— Կ. Կոստանեանց. Հայագիտութիւնն արևմտեան Եւրոպայում. Գ. Ենգիբարեան։— Հայ-ռուս բառարան Յար. Թումանեանցի. Հայ։— Ստացուած գրքեր։ . . . . . . . 86

### ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վեհ. հայրապետի մահը և թաղումը։— Լուրեր։— Լումայի հեռագիր։ . . . . . . . . . . . . . . . . 91

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիրք LXVI




ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 9—10 ՆՈՅ.-ԴԵԿՏ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Էլեկտրաշարժ տպարան Օր. Ն. Աղանեանի, պօլից., 7.
1910



Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՀԱՆԳԻՍՏ

**Ամենայն Հայոց վեհափառ եւ սրբ-
բազնազոյն Հայրապետ եւ ծայրա-
գոյն պատրիարք կաթողիկոս**

## Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.-Ի

---

Վերջին շաբաթները Էջմիածնից գուժող հեռագիրները ծանուցել էին, որ Վեհափառ Կաթողիկոսը անակնկալ կերպով սրտի ծանր հիւանդութեան է ենթարկուել և բժշկական խորհրդակցութիւններ են կատարւում: Հայ ժողովուրդը աշխարհիս ամեն կողմից ի-

րանց վշտակցութիւնն ու որդիական յարգանքներն էին ուղարկում Լուսաւորչի արժանընտիր գահակալին հեռագիրներով և նամակներով։ Խմբագրութիւնս էլ նոյն զգացմունքները մատուցել էր Նորին Սրբութեան մի գրութեամբ յանուն Հայրապետական գաւազանակիր տ. Մեսրովպ վ. Նշանեանի։

Ժողովրդի ուրախութեան չափ չըկար, երբ Էջմիածնից հեռագիրներն աւետեցին, որ վեհի հիւանդութիւնը անցել է իսպառ և Հայրապետն իրան բոլորովին առողջ զգալով՝ նուիրուել է իր սովորական պարապմունքներին։

Եւ մինչ վշտի զգացմունքը վերացել էր հայ ժողովրդից, դեկտեմբերի 11-ին Էջմիածնից տեղացող բօթաբեր հեռագիրները և քաղաքիս հայ եկեղեցիների զանգերի տխրահունչ ղօղանջիւնը գուժեցին հայ ազգին, որ Նորին օծութիւն ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ-ը 'ի Տէր է հանգել ամսոյս 11 ի լոյս գիշերը սրտի կաթուածից։

Եւ միանգամից ցնցուեց ու սուգ զգեցաւ Հայ ժողովուրդը աշխարհի մի ծայրից մինչև միւսը, ուր և բնակւում է Նա։

Հազիւ մի տարի էր անցել այն օրից, ինչ որ նա մուտ էր գործել իւր նուիրական պաշտօնը, դեռ նոր էր վերացել սգի քողը Լուսաւորչի գահի վրայից և եկեղեցին ընդունել իր արժանընտիր փեսան, դեռ իր ծանր պաշտօնավարութիւնն հազիւ սկզբնաւորած, և ահա միանգամից վերստին սգի մէջ ընկղմուեց հայ ժողովուրդն ու եկեղեցին և այրիացաւ Էջմիածնի համազգային Աթոռը, անորոշութեան մատնուեցին ազգային եկեղեցական գործերը։

Հայ ազգի հետ մենք ևս վշտամբեր հոգով ողբում ենք անդառնալի և մեծ կորուստը և մաղթում, որ շուտով վերանայ տխրութեան և սգի քօղը Հայ բազմաչարչար եկեղեցուց և ինչ որ չկարողացաւ իրագործել երջանկազարդ Հայրապետը՝ Հայ բազմակարօտ ժողովրդի բարօրութեան և Հայ եկե-

ղեցու պայծառութեան համար՝ այն ամենը մարմնանայ Նորա արժանաւոր յաջորդի ձեռքով։

Արդարների յիշատակը օրհնութեամբ թող յիշուի։

## ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Ճշմարտութեան զինուոր ես դու՝
Զինուած երկնի շանթերով.
Սուրդ՝ կայծակ, սուրդ՝ հատու,
Գաղափարի ջատագով։

Չխնայե՛ս զազիր կեանքի
Անհարազատ զաւակին.
Անվախ փշրէ՛ չար Մողոքի
Կռատունը եւ բագին։

Հուր կայծակով ժայռը հալէ՛
Ու սիւն կերտէ յաղթութեան
Չարը անարգ սիւնին գամէ՛,
Թող ծանակուի յաւիտեան։

Թ. Պետրոսեան

# Տ· ԿԻՐԱԿՈՍ Ա· ՎԻՐԱՊԵՑԻ

236. Կիրակոս Բաջբերունի էր հայրենիօք, Արճէշ գաւառի Խառաբաստ գիւղէն, Իգոնց տունէն, մանկութեան ատեն աշակերտած Աղթամարայ վանքին, և յետոյ Սուխարի կամ Խառաբաստի ուխտին, Սարգիս Ապրակունեցի և Վարդան Սուխարեցի վարդապետներուն մօտ (1389-1396)։ Այս հաշուով իբր երեսնամեայ վանական քահանայ ձեռնադրուած է Զաքէոս Արճէշի եպիսկոպոսէն (1397), և այն օրէն խստակրօն կեանքի ձեռք զարկած է, միսէ և կիթէ և գինիէ ժուժկալելով, սրբաբերան և սրբակրօն ապրելով (Կոստ. 54), և իբր խաչակրօն և խաչազգեաց ծգնաւոր հռչակուելով (Կոստ. 61)։ Կիրակոս վարդապետ անունով չյիշուիր երբեք, զի այդ անունը նախնեաց մօտ պահուած էր անոնց որք ուսումնական բարձր զարգացմամբ և երկարատև աշխատութեամբ ծայրագոյն վարդապետութեան աստիճանին կը հասնէին, մինչ Կիրակոս աւելի ճգնաւորական կեանքով համբաւ ստացած էր։ Վանական քահանայութիւն ընդունելէն 12 տարի ետքը (1409), Կիրակոս իւր հայրենի երկիրը թողուց, երբ ուրիշ Սուխարու միաբաններն ալ ասպատակութեանց պատճառով կը ցրուէին, և Վարդան Սուխարեցին ալ Սալնապատի մէջ վախճանած էր (1406)։ Առանձնութեան սէրէն մղուած եկաւ Խորվիրապի վանքը, և հոն աւելի ևս փայլեցաւ իւր ճգնազգեաց կեանքով, և այս կերպով Վիրապեցի կոչումն ալ ստացաւ։ Սակայն Լուսաւորիչի կենդանաթաղ գերեզմանն ալ դիւրակեցութեան տեղ գտնելով, անկէ ալ հեռացաւ և քաշուեցաւ Վանաստանայ անապատը, որ ամայի ճգնարան մըն էր Մասիսի ստորոտը Ակոռիի մօտ։ Այդտեղ աղօթքի և ընթերցումի պարապելով կ'անցընէր Կիրակոս իւր օրերը, անհաղորդ և գուցէ անտեղեակ իսկ Վաղարշապատի մէջ անցած դարձան գործերէն, երբ միաբանութեամբ և ընտրութեամբ Հոգւոյն Սրբոյ, տեսլեամբ գիշերոյ և յանուրջս երազոյ, հաւանութեամբ ամենայն Հայկազեան գաւառի, և բարեխօսութեամբ ամենայն սրբոց (Կոստ. 52), կոչուեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան։ Աւետարանով վիճակի պարագայն ալ կայ (Կոստ. 72), որուն ձևը բացատրուած չէ, բայց խնդիր վերջացնելու և լուծելու սովորական միջոց մը եղած ըլլալը գիտենք։

237. Մենք կը կարծենք, թէ Կիրակոսի ընտրութիւնը միջոց մըն էր զօրաւոր և բազմաթիւ հետամուտները լռեցնելու, քան թէ հետամուտ չգտնուելուն նշանակ մը։ Միւս կողմէ կը կարծուէր թէ Կիրակոսի նման աշխարհքէ փախչող և անապատասուն եօթանասնամեայ ծերունի մը, պիտի դժուարէր, յանձն առնուլ հայրապետական տագնապալի պաշտօնը, զի կարի անհնազանդ քարս ունէր, և ուտէր զփառս երկրաւորս, ուստի մեծ եղաւ սքանչացումը, և ամենքը հիացեալ զարմացան զհնազանդութիւն առն Աստծոյ և զթողուլ կամաց իւրոց, երբ տեսան որ առանց հակառակութեան եկեալ կանգնեցաւ ի մէջ ահագին ատենին (Կոստ. 73)։ Աստուածային կամքին խոնարհելով, թէ ճարտար գործիչներու խորհուրդին անսալով, չենք գիտեր, սակայն Կիրակոսի յանձնառութիւնը վերջացուց ամէն խնդիրները. որոնց համար մէկ կողմէն ուխտերու, և միւս կողմէն երազներու դիմած էին մրցակից ժողովականները։ Կիրակոս՝ վարդապետ և եպիսկոպոս չէր, հետեւաբար հարկ եղաւ նախապէս վարդապետական գաւազան և եպիսկոպոսական ձեռնադրութիւն տալ (Կոստ. 79), և յետոյ 12 եպիսկոպոսներու ձեռքով կաթողիկոս օծել։ Եպիսկոպոսներուն առաջին ու երիցագոյնն էր Զաքարիա Հաւուցթառեցին, և երկոտասան եպիսկոպոս աստի և անտի (Կոստ. 59)։ Կաթողիկոսական օծումէն անմիջապէս ետքը, հոգեգալուստի օրը (1441 յունիս 4) մեծահանդէս ժողովով աստուածագործակ միւռոն օրհնուեցաւ, և կանոնեցաւ ծրի տալ և ծրի առնուլ ըստ նմանութեան առաքելական գնդին (Կոստ. 74)։ Այդ ամէն եղելութիւնները ազգին հաղորդելու համար, Կիրակոս ծառայ ծառայից Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբ և շնորհօք նորին կաթողիկոս աթոռոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և Վաղարշապատու սուրբ Էջմիածնին և ամենայն Հայոց, զանազան կողմեր կոնդակներ արձակեց. և հայրապետական աթոռին իր բընական կեդրոնին մէջ վերահաստատուիլը աւետելէ և կարեւոր հրամանները տալէ յետոյ, ընդհանուր ներում և արձակում շնորհեց յամենայն կապանաց և բանադրանաց և նզովից որ զանազան ժամանակներ, մանաւանդ վերջին տարիներու մէջ արձակած էին Կիլիկիա նստող կաթողիկոսները, սկսելով այն նզովքէն որ Աղթամարի Դաւիթ Թոռնիկեանի դէմ արձակուած էր Գրիգոր Գ. Պահլաւունիէ Սեաւլերին ժողովով (1113)։ Այդ կոնդակները ղըրկուեցան Աղթամարի կաթողիկոս Զաքարիայի, Աղուանից կաթողիկոս Գրիգոր Հանեցիի և Սսոյ կաթողիկոս Գրիգոր Մուսաբէգեանի (Ջամչ. Գ. 488)։ Այդ վերջին անունին յիշատակութիւնը բաւական է ցուցնելու, թէ Կիլիկեցի եպիսկոպոսներու հետ Մուսաբէգեանն ալ յանձնառու եղած էր Վաղարշապատի ժողովին որոշումը յարգել։

238. Աթոռի տեղափոխութեան գործը թէպէտ ազգին հանրութեան կողմէն ընդունուած է, և բովանդակ ազգը Էջմիածինը կը ճանչնայ իբր իւր օրինաւոր հայրապետութիւնը և առաքելական յաջորդութիւնը, սակայն կան տակաւին տարբեր կարծիք յայտնող անձեր ալ։ Այսպէս եղան Կիլիկիոյ կաթողիկոսներէն ոմանք, որ երբ վէճ կամ խնդիր ունեցան, յանկարծ տեղափոխութեան անվաւերութիւնը, իբր կռուած մը մէջտեղ նետեցին։ Հայ Հռովմէականներն ալ, թէպէտ իրենց պատմութիւն գրողները համամիտ չըլլան, սակայն յորմէհետէ Կիլիկիոյ անունով կաթողիկոսութիւն մը ստեղծեցին, կ'ուզեն անոր ոյժ մը տալ այդ դարձուածքով. որպէս զի այն վերջին ատեններու պապերու կամքին պարզ արտադրութիւն չըսուի։ Բայց ինչ ալ ըսեն, և Կիլիկիոյ աթոռին ինչ ոյժ ալ ուզեն տալ, նոյն աթոռին յաջորդութիւնը Սիսի մէջ կը մնայ, և Լիբանան գացած չէ, և նոյն աթոռն ալ Երուսաղէմի ժողովով (1651), ճանչցած է Էջմիածնի գերագահութիւնը։ Հռովմէականաց Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, Բենեդիկտոս ԺԴ. պապէն սկսած նոր աթոռ մըն է (1742), և Հայոց հայրապետութիւն չըսուիր, վասն զի այն միշտ Ամենայն Հայոց անունով ճանչցուած է, և տեղւոյ մը անունին կապուած չէ։

239. Եղելութեան պատմական պահանջը լրացնելու համար, պէտք է դիտել տանք, թէ Հայոց հայրապետութեան աթոռը Գրիգոր Վկայասէրէ սկսելով Կիլիկիոյ մէջ մնաց մինչև Գրիգոր Մուսաբէգեանի ընտրութիւնը, և օրինաւոր յաջորդութիւնը շարունակեց, նոյնիսկ կաթողիկոսներէն ոմանց տարօրինակ ընթացքին և անարժան գործերուն ներքև։ Կաթողիկոսներէն ոմանց ի հաւատոյս թերանալովն և Հայաստանեայց եկեղեցւոյ անքիծ դաւանութեան նուիրական աւանդն եղծանելովն ալ, աթոռին օրինաւորութեան վնաս մը չհասնիր, քանի որ մեր եկեղեցւոյն միտքէն իսկ անցած չէ իւր հայրապետները անսխալական կամ անմեղանչական հռչակել։ Ընդհակառակն եկեղեցին իր ընդհանրութեան մէջ, իւր վրայ իշխանութիւն կը ճանչնայ իւր կաթողիկոսներն ալ դատելու, և ինչպէս ընտրելու և պաշտօնի կոչելու, նոյնպէս ալ պաշտօնէ զրկելու իրաւունքն ունի։ Այդ կէտը յայտնի եղած է Քրիստափոր Ապահունիի և Վահան Սիւնիի և Գրիգոր Քարավէժի և ուրիշներու ալ պարագաներուն մէջ։ Այդ կրնանք ըսել թէ նոյն սկզբունքով վարուեցաւ Վաղարշապատու ժողովն ալ, երբ եկեղեցւոյ կենսական խնդիրին և ստիպողական պարագային առջև, որոշեց և վճռեց աթոռը իւր սկզբնական կեդրոնին վերադարձնել, և երկարատև պանդխտութեան վերջ տալ, որ տեղի ունեցած էր պատահական պարագաներու բերմամբ։ Եւ որովհետև Մուսա-

բէգեան չուզեց տեղափոխուել, կամ թէ արժանի չդատուեցաւ ա-
թոռին վրայ մնալ, ժողովական վճռով աթոռէն զրկուեցաւ, և նոր
ընտրութեամբ Կիրակոս աթոռ բարձրացաւ։ Վերագոյնդ ակնար-
կեցինք թէ հաւանականաբար Մուսաբէգեան համամիտ պտնուե-
ցաւ տեղափոխութեան, և ինքն անձնական պատճառներով չու-
զեց տեղափոխուել, ինչպէս կը գուշակուի իրեն ալ կոնդակ ղըր-
կուելէն։ Բայց որովհետև այս պարագայն պատմական զօրաւոր
փաստերով հաստատուած չենք տեսներ, և Զամչեանի աղբիւրն ալ
չէ ցուցուած, մենք չենք ուզեր հրաժարման հետ կապել տեղափո-
խութեան վաւերականութիւնը և օրինաւորութիւն կը հաստատենք
նոյնիսկ Մուսաբէգեանը հակառակ և ընդդիմադիր ենթադրելով։

340. Վաղարշապատի ժողովը, լիակատար և օրինաւոր ազ-
գային ժողով եղաւ իր ամէն հանգամանաց մէջ։ Եօթն հարիւր ե-
կեղեցականներու, և անոնց մէջ երեք հարիւր գլխաւոր եկեղեցա-
կաններու ներկայութիւնը, ինքն իրեն պատկառելի թիւ մըն է
լիակատար ազգային ժողով ըսուելու համար։ Ներկայ չեղող ե-
պիսկոպոսներ և մեծ վարդապետներ ղրկած են իրենց հաւանու-
թիւնը։ Աշխարհական իշխաններու և գլխաւորներու անհամար
բազմութիւն մը միացած եկեղեցականներուն, լրացուցած է ազ-
գային կամքին արտայայտութիւնը։ Արտազի և Տաթևի և Հաղբատի
և Բջնոյ չորս մեծ աթոռակալները, որք նախընթաց ժողովներու
որոշմամբ լիազօր կաթողիկոսընտիրներ նշանակուած էին, ան-
ձամբ ներկայ եղած են նոյն ժողովին։ Աղուանից կաթողիկոսը,
որ Հայաստանեայց աթոռին առաջին արքեպիսկոպոսն էր, հա-
մաձայնած է այդ որոշման։ Աղթամարի աթոռը, որ նախապէս հեր-
ձեալ կը նկատուէր, բայց Անաւարզեցիէ և Տաթևացիէ ետքը մի-
ութեան մտած էր, և Վասպուրականի մէջ ընդարձակ իշխանու-
թիւն կը վարէր, ըստ ամենայնի հաճ և հաւան գտնուած է ժողո-
վական վճիռին, և գործակցած ալ է։ Եթէ Աղթամարի կաթո-
ղիկոսը այդ պարագային մէջ շահադիտական նպատակ ալ ունե-
ցած ըլլայ, երբեք իր բերած ոյժը չտկարանար։ Տաթևի կամ Սիւ-
նեաց վարդապետանոցի աշակերտութիւնը, որ ազգին մէջ հեղի-
նակաւոր ձայն ունէր, իր ամբողջութեամբ գործին մէջ գտնուած
է։ Իրեն ձայնակցած է Վասպուրականի զանազան վանքերու վար-
դապետական խումբը։ Նոյնիսկ Կիլիկիոյ եկեղեցականութիւնը
իր չորս եպիսկոպոսներու բերնով, առաջին շարժողը եղած է այդ
մեծ գործողութեան, և եթէ այդպէս ըսել արժան է, յաջողութեան
պարծանքը ստացած է, և մինչև վերջ ալ հաւատարիմ մնացած է։
Կիլիկիոյ աթոռին Մուսաբէգեանէ ետքը հինգ տարի շարունակ,
մինչև Կարապետ Եւդոկիացին դադարած ըլլալը, լուսաւոր կեր-

պով կը հաստատէ, Կիլիկեցւոց հանրութեան, գոնէ խոհական մասին, ազգին ընդհանրութենէ չբաժնուիլը։ Հետեւաբար Վաղարշակապատ ժողովին՝ ազգին ամբողջութեան ներկայացուցիչ և լիակատար ազգային ժողով լինելը երբեք երկբայութեան ներքև չկրնար իյնալ։ Եթէ ցաւալի կէտ մը կայ, այն ալ նոյն ժողովի գլխաւոր գործիչներուն, ժողովէ քիչ ետքը իրենց կատարած դերը մոռնալով, և զսպուած կիրքերուն նոր ասպարէզ տալով, իրենց իսկ ձեռօք իրենց գործին արդիւնաւորութիւնը խանգարելն է։ Երբ Կիրակոսի կաթողիկոսութեան երրորդ տարին չծագէին երկպառակութիւնները, Աղթամար ստանձնած հնազանդութեան մէջ կը մնայր, Կիլիկիոյ հակաթոռութիւնը չէր սկսէր, Ամենայն Հայոց Հայրապետութիւնը անհակառակ և անարգել կը վայելէր Էջմիածնի մէջ իւր բարձր իշխանութիւնը և իրաւասութիւնը, և Հայոց եկեղեցին նորէն դժուարութեանց և նեղութեանց չէր մատնուէր։

241. Կաթողիկոսական աթոռին տեղափոխութեանց մէջ էական դեր ունեցած է Լուսաւորիչի սուրբ Աջը։ Այդ սրբազան մասունքը, որով սուրբ միւռոնն ալ կը նուիրագործուի, և ուստի կը բաշխուին հայրապետական օրհնութիւնները, կաթողիկոսական աթոռին և իշխանութեան նիւթական նշանը ճանչցուած է ազգին մէջ, այնպէս որ գրեթէ անհնար ըլլար ճշմարիտ կաթողիկոսութիւն ունենալ առանց Լուսաւորիչի Աջին։ Աստի ծագած է որ Աջը յատուկ պատմութիւն ունեցած է մեր եկեղեցւոյն մէջ։ Գիւտի Նշխարաց Թուականէն Աջը միւս մասունքներէն բաժնուելով հայրապետանոցի սրբութեանց մին եղած է։ Աջն ու գլուխը դուրս մնացին երբ Ներսէս Գ. Շինող ուրիշ մասունքներէն կտորներ զետեղեց Զուարթնոց եկեղեցիին սիւներուն ներքև։ Երբ կաթողիկոսներ Յովհաննէս Ե. Դրասխանակերտցիէ սկսելով պանդխտութեան ելան, Աջը անոնց անբաժին ընկերն եղաւ, և միասին տեղափոխուելով հասաւ Հռոմկլայ, ուսկից Ստեփանոս Տ. Հռոմկլայեցիին հետ գերի գնաց Եգիպտոս։ Հեթումի ձեռօք գերութենէ ետ գալով Սիսի մէջ պահուեցաւ, մինչև որ Վահկացիին մահուընէն կամ Մուսաբէգեանց ընտրութենէն ետքը յանկարծ անհետացաւ։ Ժամանակակից յիշատակարաններ կը գրեն, թէ սուրբ Լուսաւորչի Աջն կորեալ է ի Սսոյ, եել համբաւ ի Վաղարշապատ, վասն որոյ ժողովեցան վարդապետք, եպիսկոպոսունք, քահանայք, եօթն հարիւր անձն, և հաստատեցին զաթոռն յԷջմիածին։ Եւ դարձեալ թէ, Աջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին գողացան ի Սսոյ, և բերեալ եդին յիւր սեպհական աթոռին և այս ի խնամոցն Աստուծոյ (Փիրղ. 133 և 129), Նոյնը կը յիշէ և Դավրիժեցին (Դավր. 336) և աւանդութիւնը մինչև ցայսօր կենդանի է ազգին մէջ։ Սակայն դիտելի է որ Մեծո-

փեցին, աթոռին տեղափոխութեան պատմիչը, այդ կորուստին և գիւտին պարագան բնաւ չյիշեր, թէպէտ տեղ մը անցողակիի կը յիշատակէ Աջը, ըսելով թէ յԱջ Լուսաւորչին երդնուին, որ ոչ զԼուսաւորիչն ճանաչէին, և ոչ զԱջ Լուսաւորչին գիտէին (Կոստ. 58)։ Եւ այս այնպիսի մի պարագայ էր, զոր պէտք չէր զանց ընէր Մեծոփեցին, որ մեծ խնամքով կը պատմէ իւր և ուրիշներուն երազները և չնչին հանդիպումները իբր մի մի պատճառ աթոռին տեղափոխութեան։ Թերևս այդ լռութենէն յորդորուած է Սիմէոն կաթողիկոս, երբ կը գրէ (Ջամբռ 8), թէ Լուսաւորչի Աջը Հռոմկլայի գերութենէն ետքը (1395), այլևս Հայոց ձեռքը չդարձաւ, մինչև որ Ջիհանշանի ձեռքով Զաքարիա կաթողիկոսին տրուեցաւ (1461)։ Սակայն ոչ միայն ազգային աւանդութիւնը (Դավր. 320), այլ և Սմբատի պատմութիւնը կ՚ընդունի Աջին գերեդարձը, գերութենէն քիչ ետքը (Սմբ. 126)։

242. Կիրակոս կաթողիկոս հազիւ երկու տարի խաղաղ պաշտօնավարութիւն ունեցաւ, և այդ միջոցին, իբրև քաջ վարիչ մը, լոկ ուղղութեան և բարեկարգութեան հոգւով շարժուեցաւ, և օգտակար գործունէութիւն ունեցաւ, խաթարեալ հայրապետանոցին պայծառութեան և խանգարեալ օրէնքներու վերանորոգութեան աշխատեցաւ։ Նորոգեց Էջմիածնի կաթողիկէն, և Հռիփսիմեանց ու Գայիանեանց տաճարները. գաւառներու մէջ վանքերու և եկեղեցիներու նորոգութիւնները քաջալերեց, և բարեկարգութեան նախանձախնդրութեամբ հայրապետադիր կանոնները գործադրութեան վերակոչեց, և ժողովրդական բարեպաշտութիւնը գրգռեց որ սուրբ աթոռին նպաստեն արտաքին միջոցներով, և աստուածապաշտ ազգս Հայկազեան, Արարատ և կողմն Վասպուրական, մարմնաւոր պիտոյիւք, անասնօք և չորքոտանեօք լցին զսուրբ աթոռն (Կոստ. 75)։ Կիրակոս յանապատէ կոչեցեալ ի հայրապետական աթոռ, կը նըմանի ըստ իմիք, Կղեստինոս Մուրրոնի, որ դար մի առաջ նոյն կերպով Հռոմի աթոռը բարձրացաւ, այլ Կիրակոս անկէ գերազանց գտնուեցաւ, և իբրև փորձառու պետ մը ձեռք առած իշխանութիւնը բարձրացուց, մինչ Մուրրոն բոլորովին ապիկար մը յայտնուեցաւ։ Կիրակոսի գործակից և խորհրդակից էին իւր հին ծանօթներն ու ընկերները, բոլորն ալ Վասպուրականցիք, որք ազդեցիկ կուսակցութիւն մը կազմեցին Էջմիածնի մէջ, Թովմաս Մեծոփեցիի գլխաւորութեամբ, և այս եղաւ պատճառը, որ հակառակ կուսակցութիւն մը կազմուեցաւ Արարատցիներէ և Սիւնեցիներէ բաղկացած, որ Վասպուրականցիները տկարացնելու համար, նոյն ինքն Կիրակոսի դէմ սկսաւ մաքառել։

243. Նոր կուսակցութեան գլուխ կեցաւ Մարկոս Վրաստա-

նի եպիսկոպոսը, Յովհաննէս Հերմոնեցիի աշակերտներէն, որ ընտրութեան ատեն բացակայ էր մնացած, և կարծես թէ անով եղելութեանց հակառակելու իրաւունք կը ստանար: Իրեն առաջին համախոհներն եղան, Աստուածատուր վարդապետ Սաղմոսավանեցի, Գաբրիէլ եպիսկոպոս Յովհաննավանեցի, և Համազասպ Երևանի եպիսկոպոսը: Ասոնք ձեռքի տակէն գրգռողն էր Գրիգոր Արտազի եպիսկոպոսը, որ ընտրողական ժողովի ատեն կաթողիկոսանալու հետամուտներէն մէկն էր: Այս թիւէն էր նաև Զաքարիա Հաւուցթառայ եպիսկոպոսը, որ իբր երիցագոյն Կիրակոսի ձեռնադրողն էր եղած, և կաթողիկոսանալու համար ջանքեր ըրած էր: Ասոնք յաջողեցան իրենց կողմը ձգել Շմաւոն Տաթևւի եպիսկոպոսը, և նոյնիսկ Յովհաննէս Կոլոտիկ վարդապետը, Հերմոնավանքի առաջնորդը, որ արդէն ծերացած էր և ականջները խլցած (Կոստ. 78): Ասոնց նախանձին մեծ շարժառիթը Վասպուրականցիներուն զօրանալն էր, և իրենց խումբը ատելութիւն ունէր ընդ կողմանս Վասպուրականին (Կոստ. 76), միանգամայն կը յիշէր որ եթէ Արտազեցին կամ Հաւուցթառեցին չյաջողեցան կաթողիկոսանալ, և Վասպուրականցի մը առջև անցաւ, պատճառն այն էր, որ ի նոյն օր ձեռնադրութեան, կամ կաթողիկոսական ընտրութեան, վարդապետն այն Թովմաս Մեծոփեցին, և Զաքարիայն Աղթամարի կաթողիկոսը, ոչ կամեցան նմա լինել կաթողիկոս, վասն ատելութեանն որ առ նա ունէին (Կոստ. 78): Միով բանիւ յայտնի կ'ըլլայ ինչ որ արդէն յիշեցուցինք, որ չէթէ կաթողիկոսութեան հետամուտներ չկային, այլ շատ լինելուն պարտաւորուեցան քաշուիլ, վասն զի Վասպուրականցիք զօրացան, և իրենց բուն ընտրելին, Աղթամարի Զաքարիա կաթողիկոսն ալ փոխադրել չհամարձակելով, Այրարատի ծանօթ Վասպուրականցի մը առջև անցուցին: Մեծոփեցին կը յիշէ որ Երևան չեկած Ակոռի հանդիպած է (Կոստ. 67), և ասով Վիրապեցիին հետ կանուխէն համաձայնութիւն գոյացուցած ըլլալը կը մատնէ:

**244.** Վերոյիշեալ անձեր, որոնց միացան հետզհետէ Ստեփանոս Եղեգեցեաց վարդապետը և Անտոն Խորվիրապի եպիսկոպոսը, և այլ անուղղայ եպիսկոպոսք և քահանայք աւելի քան զերեսուն և զքառասուն ոգի (Կոստ. 79), համախումբ Էջմիածին եկան Հերմոնեցիին գլխաւորութեամբ, և ժողովի գումարուելով որոշեցին Կիրակոսը աթոռէն վար առնել և անոր տեղը նստեցնել Արտազի եպիսկոպոս Գրիգորը, Կիրակոսի անձին դէմ ամբաստանութիւն չունէին, ճգնութեամբ Լուսաւորչին հանգոյն է կ'ըսէին, միայն թէ ծննդեամբ Աղթամարի հպատակութենէն է, որ ի բազում ժամանակաց հետէ բանադրեալ են, և թէ կաթողիկոսէ մը եպիսկոպոս ձեռնադրուած չէ, որ

յետոյ եպիսկոպոսութենէ կաթողիկոսութեան անցնէր։ Այդ պատճառաբանութիւններով անվաւեր հռչակեցին Կիրակոսի կաթողիկոսութիւնն ալ, եպիսկոպոսութիւնն ալ, մինչև իսկ քահանայութիւնն ալ, գուցէ մկրտութիւնն ալ։ Յայտնի է թէ որչափ անհիմն էին այդ կարկատուն պատճառաբանութիւնները։ Աղթամարի բանադրանքը վերցած էր Անաւարզեցիի ժամանակէն, և յատկապէս Արճէշի բանադրանքը նորէն վերցած էր Տաթևացիի ժամանակէն, և ինքն Կիրակոս 32 տարի առաջ Աղթամարի սահմաններէն հեռանալով Արարատի հպատակութեան ներքև կ'ապրէր։ Իսկ եպիսկոպոսական ձեռնադրութեան կաթողիկոսէ տրուիլը սովորութիւն մըն է մեր ազգին մէջ, և ոչ վաւերականութեան պահանջ, որովհետև Նիկիական կանոնով, երեք եպիսկոպոսք եպիսկոպոս ձեռնադրեն, և նոյնիսկ Հայոց մէջ շատեր եղած են, որ լոկ քահանայ կամ վարդապետ, և մինչև իսկ աշխարհական ըլլալով կաթողիկոս ընտրուած են, և եպիսկոպոսներէ ձեռնադրութիւն ստացած են։ Մեծոփեցին կ'աշխատէր պատճառաբանելով ցրել առջև դրուած մեղադրանքները (Կոստ. 77), բայց պատճառաբանութիւններ արժէք չունին, ուր կիրքեր կը տիրեն։

245. Միաբանեալք մտադիր էին մինչև իսկ բռնութեամբ իրենց կամքը գործադրել, սակայն Կիրակոս առաջին շշուկը լսելուն հայրապետանոցը թողուց և մասնաւոր տուն մը պահուըտեցաւ։ Հակառակորդներ Երևան գացին որ Եաղուպ պէյէ իրենց որոշման հաստատութիւնը ընդունին, սակայն Եաղուպ պէյ պատասխանեց, թէ նոյն իսկ Յովհաննէս Հերմոնեցին և Զաքարիա Հաւուցթառեցին էին, որ ձեռնադրութիւնը կատարած էին և ըրածներնուն հաստատութիւնը իրմէ ստացան։ Հակառակորդներ նոյն բաղբաղանները կը կրկնէին, երբ Ծերուն անուն երիտասարդ մը, Մեծոփեցիին ազգականներէն, համարձակ գոչեց թէ հակառակորդները կը ստեն։ Ստեփանոս վարդապետ եհար զբերան մանկանն, որ լցաւ արեամբ, և Եաղուպ պէյ ամէնքը մէկէն ատեանէն դուրս հանել տուաւ։ Առաջին ձախողութենէ չկասեցան Կիրակոսի դէմ ելլողներ, Զաքարիա Հաւուցթառեցին առջև անցաւ և կաշառքով Եաղուպ պէյը շահեցաւ, և առաջարկութեան հաստատութիւնը առաւ։ Հակառակորդներ յաղթանակով Էջմիածին դարձան և մեծահանդէս պատարագի մէջ Գրիգոր Արտազեցին կաթողիկոս օծեցին (1443), և կաշառքին գինը Վասպուրականցի վարդապետներէն հանեցին, զրպարտութեամբ և մատնութեամբ անոնց գլխաւորները տուգանքներու ենթարկելով։ Կիրակոս Ռշտունիէն 13,000, Սարգիս Սալնատացիէն 6,000 դահեկան առին, Մեծոփեցին իրեն համար բան մը չյիշեր (Փիրզ. 130)։ Թովմաս տարի մի ևս դեգերեցաւ

Էջմիածնի կողմերը, յուսալով և աշխատելով որ հնար ըլլայ վերստին առաջին դիրքը գրաւել, այլ տեսնելով որ Գրիգորի դիրքը օրէօր կը զօրանայ Արարատցիներու և Սիւնեցիներու օգնութեամբ, և թէ յոյս չկայ Վասպուրականցիներու զօրանալուն և Կիրակոսի դառնալուն, Էջմիածինը թողուց և Մեծոփայ վանքը դարձաւ, Արճէշի առաջնորդութիւնը ստանձնեց, և չորս տարի ետքը (1448) այնտեղ վախճանեցաւ։

246. Իսկ Կիրակոս ժամանակ մը պահուըտած մնալէ ետքը, նորընտիր կաթողիկոսին հաւանութեամբ ազատութիւն ստացաւ ինչպէս որ ուզէ այնպէս ապրել, և վանք մը առանձնացաւ, որուն անունը յիշուած չէ, այլ անշուշտ Վաղարշապատի մօտիկ վանքերէն մէկն է։ Կիրակոս, որ իւր ճգնազգեաց և անպատաստուն կեանքին բերմամբ, հայրապետական աթոռին և անոր ծանրութեանց սիրող մը չէր կրնար ըլլալ, սիրով և յօժարութեամբ թողուց կաթողիկոսութիւնը առանց Գրիգորի դիմադրելու, և Գրիգոր, որ բաւական ճարտար անձ մըն էր, թողուց որ Կիրակոս բոլոր կաթողիկոսական պատիւները և նոյն իսկ անունը վայելէ, իբրև հայրապատիւ ծերունի մը զայն կը մեծարէր, և անուանական կաթողիկոսի ձեւերն ալ չէր զլանար։ Այդ ամէնը կը տեսնուի զանազան յիշատակարաններէն, յորս Կիրակոս իբր բացարձակապէս կաթողիկոս կը յիշատակուի, Գրիգորի օծումէն ետքը 1443, 1445. 1446, 1447 թուականներուն (Փիրղ. 132, 135, 151, 153, 154, 157), և երբեմն ալ Կիրակոս և Գրիգոր զոյգ կը յիշատակուին իրարու հետ (Փիրղ. 133 և 148)։ Եթէ Կիրակոսի միայն յիշատակութիւնը կրնայ մեկնուիլ իբր Վասպուրականցիներու Կիրակոսի հաւատարիմ մնալուն նշան մը, երկուքին մէկտեղ յիշատակուելը կը ցուցնէ, թէ սիրալիր և համերաշխ յարաբերութիւն կը տիրէր Կիրակոսի և Գրիգորի միջև. և եթէ Գրիգոր էր տիրապէս կաթողիկոսութիւն կը վարէր, Կիրակոս ալ կաթողիկոսութեան արտաքին պատիւները կը վայելէր, իւր մօտ ութսնամեայ տարիքին և սիրեցեալ առանձնութեան մէջ։ Այսպէս Կիրակոս աղօթքի կենցաղով, սրբութեամբ և խաղաղութեամբ կը կնքէր իւր կեանքը, հաւանական հաշուով 1448 ին, իւր պաշտպանին Թովմաս Մեծոփեցիի մահուան ատենները, թողլով սուրբ և խաղաղարար անձի անունը։ Պատմութեան առջև իրեն համար պատուաւոր է, որ իւր անունը կապուած է Հայրապետական աթոռին տեղափոխութեան նշանաւոր և կարևոր գործին հետ։ Թէպէտ և օրէն էր Կիրակոսի կաթողիկոսութեան միջոցը մինչև 7 տարի երկարել (1441—1448), սակայն համաձայնելով իւր կամաւոր հրաժարման, և հետևելով ընկալեալ սովորութեան, 2 տարիով (1441—1443) կը փակենք իրեն կաթողիկոսութիւնը։

**Մաղաքիա արք. Օրմանեան**

*
* *

Լուռ գիշերուան այս մենաւոր գրկի մէջ
Լսում եմ քո դիւթող ձայնի ել եւ էջ.
Կենսաբրբիռ, մեղուշ ձայնիդ ամեն վանկ
Սրտիս խորքում գտնում է յուռ արձագանք·
Օ՜, ես արբած, ողջ էութեամբ հուր երազ
Սաւառնում եմ բարձունքները երկնահաս.
Եւ տարագիր՝ այս աշխարհի խորթ զաւակ,
Փնտրում եմ քեզ այն եթերքում կապուտակ…
Ու թող հնչուի՛ն, թող միշտ հնչուի՛ն քո երգեր,
Հոգիս տանեն միշտ դէպի վե՜ր, դէպի վե՜ր…

Ց. Պետրոսեան

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆՑ

ՊՐՕՖ. ԿՐԻՄՍԿԻ

Այդպիսի դէպքերում նախարարները համարեա միշտ Մամիկոնեաններից էին ընտրում իրանց համար պարագլուխ։ Դորանից ակներև է, որ Մամիկոնեանց տոհմի մտաւոր և հոգեկան առաքինութիւնների գերազանցութիւնը ամենքը ճանաչում էին ու խոստովանում։ Արդ՝ եթէ այս կարծիքը ճիշտ է, ուրեմն ի՞նչու այնուհետև նոքա ազգովին ընդ միշտ Մամիկոնեանների միջից չէին ընտրում Հայաստանի ղեկավար-իշխան, պատասխանատու դիկտատոր Պարսից դրան և բիւզանդական կայսեր առաջ։ Քանի որ դրացի պետութիւնները չէին արգելում Հայերին հոգևոր գլուխ ընարել յանձին ազգիս հայրապետի, ո՞վ կարող էր խոչնդոտ լինել այսպիսի ընտրութեան։ Խոչընդոտը հէնց իրանց իշխանների մէջն էր, որոնք չգիտէին հաշտեցնելու իրանց եսամոլ շահերը պետութեան կարիքների հետ. իսկ ժողովուրդը, իբրև նոյն իշխանների ճորտ, ձայն չունէր և անբան անասունի նման հլու հպատակ էր իւր մեծաւորներին։ Երբ հայրենիքը վտանգի մէջ էր՝ Մամիկոնեանները Ցինցինատի դերն էին կատարում, անցաւ վտանգը, իշխանները դարձեալ իրանց հին երգն էին երգում։ Իբերի այս դրութիւնը շատ լաւ հասկացան Արաբացիք և մի գեղեցիկ օր Կաշմ ոստիկանը Նախջուանի եկեղեցում խաբէութեամբ հաւաքեց Հայոց հարիւրաւոր մեծամեծներին և 74 թ. այրեց ամենքին. և Հայաստանը զըրկուեց իւր խռովարար աւագանուց։ (Զամչեան խրախճան էջ 194) Եւ այսպէս, թէև նուաճեց, բայց նոցա հոգեկան որակը նոյնը մնաց և պետական գաղափարի համար չհասունացան նոքա և

անընդհատ գտնուեցան ըմբռնելու դրացի պետութիւնների մէջ տիրապետող կանոնների, կարգերի և իրաւունքների իմաստը։ Քանի՜ քանիսը հայ իշխաններից Պարսից և Բիւզանդացւոց արքունիքի սարգ ու կազմին սիրահար ծառայում էին հաւատարմութեամբ օտարի, բարձր պատիւ և հռչակաւոր անուն ստանում այնտեղ. եղել են և այնպիսիները, որոնք բիւզանդական գահն անգամ բարձրացել են իրանց պետական և զինուորական հանճարի շնորհիւ, բայց ի՞նչ օգուտ նոցանից մայր հայրենիքի համար։ Սահակ Պարթևի և ս. Մեսրոպի աշակերտներն էլ սիրահար էին Ասորոց և Յունաց գիտութեան, յաճախում էին նոցա դպրոցները. սակայն նոքա այնտեղ ընդմիշտ չէին մնում, վերադառնում էին հայրենիք գիտութեան մեծ պաշարով, իրանց գիտութիւնը նուիրում էին հայրենիքին ու չէին ծառայեցնում իրանց անձնական շահերին, հարստութիւն չէին դիզում, ինչպէս անում են ներկայումս պ. պ. մեր փաստաբանները, բժիշկները, ինժեներները և այլն։

Գանք այժմ Պարսից պատմութեան։ Կաւատ I-ին յաջորդեց նորա որդին Խոսրով I Անուշ բռուան (1531-579), որ նշանակում է «օրհնեալ (անմահ)»։ Սոյն թագաւորութեան պ. Կրիմսկին նուիրում է 18 էջեր, ուր մանրամասնօրէն աւանդում է նորա ներքին և արտաքին գործունէութիւնը։ «Մինչև ներկայ ժամանակը այս անունը, ասում է ռուս գիտնականը, գործ է ածւում արևելքում իբրև նշանակ (СИМВОЛЪ) իդէալական թագաւորի։ Շատ մեծ եռանդուն թագաւորների նման (օր. Մեծին Պետրոսի) Խոսրով I, ի պահանջել հարկին հանդիսանում էր խիստ, մինչև անգամ անագորոյն (Մազդակականների կոտորածների միջոցին). ինքնակալի բռնաւորութիւնից էլ նա զուրկ չէր և արդեան եւրոպացու տեսակէտից Խոսրով I-ը, յայտնի բան է, իդէալական կառավարիչ չէ կարող համարուել. սակայն այսպիսի անարկու ու զօրեղ անձնաւորութիւնները, որոնք ինքնակալաբար արդարութիւն են կատարում, արևելեան բնակիչներին ուղղակի հմայում են ու հիացնում։ Գահ բարձրանալով Խոսրով I. գանձարանը և պետութիւնը առհասարակ քայքայուած դրութեան մէջ գտաւ, մասամբ արտաքին

պատերազմների, բայց աւելի ներքին մազդակական անկարգու-թիւնների շնորհիւ: Տէրութեան դրամական գործերը կանոնաւորելու նպատակով, Խոսրով I, շարունակելով տակաւին Կաւատի օրերում սկսած աշխարհագիրը, հողային հարկերի այնպիսի սիստեմ սահմանեց, որ համապատասխանում էր հարկատուների ճշմարիտ ոյժերին, ծանր բեռ չէր նոցա համար և միևնոյն ժամանակ յաջողութեամբ լրացնում էր պետական գանձարանը. պաշտօնէից զեղծմունքները և կամայականութիւնը կարճելու համար մշակուեց մի շարք ուրոյն (վերաստուգիչ) դրութիւններ: Հպատակների տնտեսական դրութիւնը բարւոքելու, վաճառականութիւնը և արդիւնաբերութիւնը ծաղկեցնելու դիտաւորութեամբ Խոսրով I հոգ տարաւ կառուցանելու կամ նորոգելու բազմաթիւ ջրանցքներ, ամբարտակներ, կամուրջներ և այլն, որոց տնտեսական օգուտ էր շահում բնակչութիւնը նաև հոյակապ շէնքերի կառուցումից, օրինակ Տիզբոնի ապարանքի շինութիւնից, որ յետոյ մահմետականները համարում էին ամենամեծ շէնք աշխարհում. Դէմոկրատիական, ազատամիտ մազդակեան շարժումը ուժգին կերպով խախտեց անձնական սեփականութեան և ընտանիքի գաղափարը, այնպէս որ դեռ Կաւատ I միջոցներ ձեռք առաւ ամենայն ինչ հին կարգի բերելու համար. Խոսրով I շարունակեց գործել նոյն պահպանողական ուղղութեամբ:

Պահպանողական ներքին քաղաքականութիւնը, հարկաւ, չէր կարող չնպաստել աւագանու դիրքի ամրանալուն պետութեան մէջ. սակայն Խոսրով I-նը այնպիսի հաստատուն բնաւորութեան տէր էր, որ առանց անարգելու մեծամեծներին՝ գիտէր հնազանդութեան մէջ պահելու նոցա. նոյնպէս վարւում էր նա և հոգևորականութեան հետ. արդէն մազդակականների ջնջումը ցոյց է տալիս, թէ որչափ Խոսրով I զօրացրեց զրադաշտականութեան ոյժը. առհասարակ նա աշխատում էր մոգերին իրան նեցուկ շինել, բայց թոյլ չէր տալիս նոցա իրան ղեկավարել և մեծ ներողամտութեամբ, անգամ սիրելութեամբ էր վերաբերւում քրիստոնեայ — նեստորականներին և մոնոֆիզիտներին անխտիր: Հովանաւորութիւն անելով քրիստոնեաներին՝ Խոսրով հաւատարիմ

մնաց միահեծան իշխանութեան. զայրացած Նեստորական կաթողիկոս մատենագիր Մար-Աբա I-նի *) կամ Մեծի (536—552) վրայ սորա յանդգնութեան առթիւ, Խոսրով տարագրեց նորան և հրամայեց քանդել Նեստորական տաճարը Սելևկիայում, բայց նոյն և Խոսրովը նպաստեց քրիստոնեաներին կառուցանելու նոր տաճարներ ու վանքեր։ Նա արգելում էր, 'ի հարկէ, և կրօնական քարոզութիւնը քրիստոնէութեան զրադաշտականների մէջ և խիստ պատժեց ասորի մօնոֆիզիտ եպիսկոպոս Սխուդէմմէին, որ մկրտել էր Խոսրովի որդոց մէկին (575). սակայն երբ նորա թագաւորութեան կիսում քրիստոնեաները իւրեանց համակրութիւնը յայտնեցին նորա ապստամբ որդուն՝ Անուշեզադին՝ Խոսրով չփոխեց իւր բարեհաճութիւնը դէպի այս կուլտուրական տարրը իւր տէրութեան»։

Յիշեալ քրիստոնեաները, որոնց մասին խօսում է պ. Կրիմսկի, յատկապէս Նեստորական ասորիներն էին, որոնց գրականութիւնը լայն ծաւալ ստացաւ Պարսկաստանում Խոսրով I-նի հովանաւորութեան ներքոյ և հետևող էր Յունաց եկեղեցական փիլիսոփայական գրականութեան։ Պ. Կրիմսկի բաւականին մանրամասնօրէն խօսում է Խոսրովին ժամանակակից ասորի հեղինակների մասին, որ աւելորդ եմ համարում երկրորդել այստեղ, քանի որ ձեռքիս տակ ունիմ ուրոյն գրուածք հետևեալ խորագրով «Очерки исторіи Сирійской литературы Райта **)», որին, եթէ ժամանակս ներէ, կնուիրենք առանձին մենագրութիւն. իսկ այժմ դառնանք Խոսրովի արտաքին քաղաքականութեան, որ պատերազմներով լի էր։

Գահ բարձրանալուց զկնի (532 թ.), Խոսրով վերջ դրեց Յուստինիանոսի հետ մղած պատերազմին, որ մղում էր Կաւատը և հաստատեց «յաւիտենական խաղաղութիւն»։ Վերջինս, կարծես, գոյութիւն չունէր Պարսկաստանից և Բիւզանդիոնից աւա-

---

*) Այլապէս յունական ձևով նա կոչւում է Մար-Աբաս, ինչպէս գործ է ածւում Հայոց մօտ. (Մ. Խորենացու պատմութեան մէջ)։

**) Ասորոց գրականութիւնը իւր ազդեցութիւնը ունեցաւ Հայոց դպրութեան վրայ և դորանով հետաքրքիր է մեզ համար։

տական կախումն ունեցող երկու արաբական սահմանակից Հիրայի և Հասանի թագաւորութիւնների համար, որոնք շարունակում էին իրար հետ կռիւները։ Ութը տարիներից յետոյ (540 թ.) Խոսրով ինքը խանգարեց «յաւիտենական խաղաղութիւնը», երկիւղ կրելով Յուստինիանոսի յաղթութիւններից Աֆրիկայում (վանդալներ) և Իտալիայում (Օստգոթներ) և դըրդուած Հայերից *) և Օստգոթների թագաւոր Վիտիգեսի կողմից, որին ջարդել էր Ռավեննայի մօտ Բելիզարիոսը։ Հետևելով Շապուհ Առաջնի օրինակին, Խոսրով մտաւ Ասորիք և այս անգամ աւելի յաջողութեամբ, քան թէ նորա հայր Կաւատը արաւ 531 թ։ Ինչպէս երբեմն Շապուհ I III դարում, այնպէս էլ այժմ (540 թ. յունիսին) Խոսրով առաւ Անտիոքը, ընդդիմադրութեան համար այրեց, կողոպտեց քաղաքը, դեղարուեստի իրեղէնները և բնակիչներին տեղափոխեց Պարսկաստան։ Վերջին դէպքում Խոսրով I ղեկավարւում էր այն դիտաւորութեամբ, որ կարողանայ Պարսկաստան փոխադրել նոցա արհեստները և գիտութիւնը. ուստի իւր մայրաքաղաք Տիզբոնի մօտ նա շինեց անտիոքացի գաղթականների համար մի առանձին աւան— «Խոսրովի Անտիոք» **) կամ Հռոմայեցւոց քաղաք «Հռումիէ», հոգ տարաւ, որ այդ աւանը իւր շէնքերով, տներով ու կարգերով յիշեցնէր հին Անտիոքը, գաղթականներին տուեց առանձին քրիստոնեայ քաղաքագլուխ. և արդարև, գաղթականները պահպանեցին այստեղ, մինչև Սասանական հարստութեան անկումն, իւրեանց բոլոր բարքերը, սովորութիւնները, զոր. հին Անտիոքում սիրած ձիարշաւանքները։ Պատերազմի երկրորդ տարին Խոսրով յաջողութեամբ գործում էր Լազիստանում (Կոլխիս) և Միջագետքում. 546 թուին բիւզանդացիք մեծ փրկանք տալով ազատուեցան պատերազմից. 553 թ. խաղաղութիւնը շարունակուեց դարձեալ հինգ տարի. սակայն պատերազմական գոր-

*) Գուցէ Յունաց բաժնի Հայերից։

**) Շահաբաս Մեծն էլ XVII-դարում Հայերին բռնի քշելով Պարսկաստան, կամեցաւ Ասպահանում Նոր Էջմիածին շինել և նորա համար բերել տուեց այնտեղ Ս. Լուսաւորչի Աջը և Ս. Էջմիածնի քարերը։ (Տես. պատ. Առաքել Դաւրիժեցու). Մ. Շ.

ծողութիւնների շրջանից հանուած էր սահմանական գիծը Սեւ ծովի եզերքում—Լազիստանը (553 թ. Պարսիկները մինչև անգամ պարտութիւն կրեցին Փոտի քաղաքի մօտ Ռիօն գետին կից). պատերազմը չդադարեց արևմտեան անապատի ծայրում Հիրայի և Հասսանի Արաբացւոց մէջ և մի ճակատամարտում ընկաւ ամեհի և գազանաբարոյ Մունզըր III-դը, որ մարդկային զոհեր էր մատուցանում Օզզա դիցուհուն, ինչպէս իւր տեղում յիշեցինք: (Արաբացւոց ներքին կռիւները մի կողմ թողնելով, մենք դառնանք Պարսից և բիւզանդացւոց յարաբերութիւններին)։

Լիակատար խաղաղութիւնը Պարսկաստանի և Բիւզանդիոնի մէջ հաստատուած 562 թ. կնքուեց 50 տարով։ Հաշտութեան պայմանների մէջ մտցրած էր մի կէտ, որի զօրութեամբ Բիւզանդացիք երաշխաւորում էին մի որոշ գումարի վճարումը՝ Կովկասեան բերդերի պահպանութեան համար։ Խոսրով I շինեց Դերբենդի երևելի պարիսպները մինչև Կասպից ծովը. բայց և ծովերի ափերը մնացին Յունաց ձեռքում։

Իրանի արևելեան սահմաններում, Միջին Ասիայում, հաշտութեան միջոցին 546—562 տեղի ունեցաւ մեծ փոփոխութիւն։ Հիւսիսային տափարակներից Միջին Ասիա միջամուխ եղան Թիւրքեր (Тюрки, որոնց անունը միայն այժմ է յայտնի դառնում արևմտեան աշխարհում). դաշն կապելով Խոսրովի հետ, նոքա կործանեցին Հեփթաղների թագաւորութիւնը. Թիւրքերի խաքանը (թագաւոր) Սիլզիբուլ ըստ Յունաց, իսկ պարսիկ-արաբացւոց Սինջիբու, առաւ իրան Հեփթաղների թագաւորութեան այն մասը, որ գտնւում է Օքսուսի կամ Ամու-Դարեայի աջ ափերում (այսինքն է այն, որ այժմ մենք կոչում ենք Թուրքեստան), իսկ Խոսրով գրաւեց Հեփթաղների երկիրը Օքսուսի ձախ ափում (560 թ.) այսպէս Բակտրիա, որ այնքան չարիք պատճառեց Իրանին և կորստեան մատնեց Պերոզին, այժմ սասանական թագաւորութեան նահանգ դարձաւ։ Օքսուս այնուհետև անջրպետեց Իրանը Տուրանից։ Շուտով սկսան դարևոր պատերազմներ Խոսրովի իսկ օրերում Իրանի և Տուրանի մէջ և յետոյ հարաւային Արաբիայում: Այնտեղ, Եմենում, հարաւ-արաբական խիմեարի թագաւորութիւնը II դ.

դարում Քրիստոսի բռնելով հին Սաբեյական թագաւորութեան տեղը, VI դարում ենթարկուեց Եթովպիայի քաղաքական խիստ ազդեցութեան։ Չորրորդ դարու կիսում Եթովպիա եկան Բիւզանդիոնից քրիստոնեայ քարոզիչներ և շուտով եթովպացիք ագգովին մկրտուելով՝ ուրիշ կողմեր էլ տարածեցին քրիստոնէութիւնը օր. Նաջրան, և Ադէն։ Իւր քաղաքական համակրանքներով քրիստոնեայ Եթովպիան բնականաբար մտաւ Արևելեան Հռովմայեցւոց շահերի շրջանը։ Հայրենասէր եմէնցի արաբացիները չէին կարող ձգտել դէպի քրիստոնէութիւնը, ինչպէս նոցա հայրենակից նաջրանցիք և ադենցիք և հաւատարիմ էին իրանց հեթանոսական կրօնին և կամ ընդունում էին հրէական քարոզութիւն, որ մտնում էր Արաբիա հիւսիսից, կորցնելով այնտեղ ազգայնութեան դրոշմը և փոխուելով միաստուածութեան։ Հինգերորդ դարում ազատուած հարաւային Արաբիայի և Եթովպիայի մէջ խաղաղութիւն էր տիրում, բայց երբ VI դարու սկզբում պատերազմ ծագեց Պարսկաստանի և Արևելեան Հռովմայեցւոց կայսրութեան մէջ, Եթովպացիք պահանջ զգացին յարձակուել հարաւային Արաբիայի վերայ։ Այդ դիտաւորութեան՝ իւրեանց խնդիրքով նեգուսին, նպաստեցին բիւզանդական կայսերք Յուստինոս I (513—527) և Յուստինիանոս I (527—565), որոնք օգտակար էին համարում իրանց համար, որ Եմէնում լինի Բիւզանդիոնին հաւատարիմ մի թագաւորութիւն, որ հարաւից կարողանար դիմադրել Բիւզանդացւոց համար ատելի արաբական Հիրայի պետութեան։ Միջամտութեան առիթը շուտով ներկայացաւ Եթովպացւոց 520 թ., երբ հրէական կուսակցութիւնը Եմէնում գահ բարձրացրեց Զու-Նովասին։ Նոր տօբբա, այսպէս էին կոչւում խիմեարի թագաւորները, քրիստոնեաների անհաշտ թշնամին լինելով, 20,000 քրիստոնեայ կոտորեց և որովհետև գիտէր, որ եթովպացիք անպատիժ չեն թողնի նորա վարմունքը, բանակցութիւններ սկսեց Բիւզանդիոնի հակառակորդ Պարսկաստանի հետ, Հիրայի թագաւոր Մունդըրա III դի միջնորդութեամբ։ 525 թ. եթովպացիք Յունաց նաւերով ցամաք իջան Եմէնում, ուր քրիստոնեաները միացան նոցա հետ, բռնեցին Զու-Նովասին և սպանեցին. Եմէնում

հաստատուեց եթովպական փոխարքայ։ Այն ժամանակ Պարսկաստանում թագաւորում էր Կաւատ I։ Մինչև նորա թագաւորութեան վերջը Արաբիան մնաց Եթովպիայի տիրապետութեան տակ, նաև Խոսրովի օրերում մօտաւորապէս յիսուն տարի։ Եթովպացւոց արշաւանքը դէպի Մեկկա անհետևանք անցաւ 570 թ։ Խիմեարի հարստութեան վերջին իշխան՝ դիւցազն Սէյֆ, իզուր մաքառելով եթովպացւոց դէմ, գնաց, վերջապէս, Պարսկաստան օգնութիւն խնդրելու. Խոսրովը զօրք ուղարկեց Արաբիա Բահռիզի զօրավարութեամբ և հաստատեց գահի վրայ Սէյֆին։ Բայց երբ Սէյֆին սպանեցին, նորա խստութեան համար, այն ժամանակ Բեհռիզ վերջնականապէս Եմէնը միացրեց Իրանին և ինքն շահի փոխարքայ դարձաւ։ Նորա սերունդը մնաց Եմէնում մինչև Մոհամեդի ժամանակը։

Եթովպական քրիստոնեայ թագաւորութեան կործանումը Եմէնում զայրացրեց Բիւզանդացւոց, որոնց վրայ թագաւորում է անհանճար Յուստինոս II-դը (565-578). կայսրն էլ իւր կողմից բարկացրեց պարսիկներին, յարաբերութեան մէջ մտնելով թիւրքերի խաքանի հետ, և ընդհատելով պայմանաւորեալ գումարի վճարումը։ Խաքանը թշնամացաւ Իրանին. իսկ երբ Պարսկաստանի դէմ ապստամբութիւն ծագեց Հայաստանում կրակապաշտութեան մեհեանի շինութեան պատճառով*) և երբ նոյնպիսի խռովութիւններ սկսան Վրաստանում, Յուստինոս II իւր հովանաւորութեան ներքոյ առաւ երկու երկիրներն էլ և ահա նորից պատերազմ բորբոքուեց Իրանի և Բիւզանդական կայսրութեան մէջ (571 թ.)։ Արիւնահեղ պատերազմը տևեց քսան տարի Խոսրովի մահից յետոյ և պատերազմի ասպարէզը փոխւում էր մերթ Միջագետք, ուր պարսիկները առին Դարան, մերթ Ասորիք և Կապադովկիայի խորքերը։ Կատաղած հակառակորդները արդէն պատրաստում էին հաշտութիւն խօսելու, երբ Խոսրովը մեռաւ 579 թ. և նորան յաջորդեց Որմիզդ IV։ Չորս ամիս դորանից առաջ Բիւզանդական գահը բարձրացաւ Տիբերիոս I (578-582)։

*) Վերը արդէն յիշեցինք, որ ապստամբութեան գլուխ անցաւ Վարդան II Մամիկոնեանը։ Մ. Շ.

## ՈՐՄԻԶԴ IV ԵՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՎԱՀՐԱՄ ԶՈՒԲԻՆԻ

Որմիզդ IV (579-590), Խոսրովի յաջորդը այնքան զօրեղ էր, որ աւելորդ համարեց իւր գահակալութեան մասին հաղորդել բիւզանդական դրան, այն ինչ այդպիսի զեկուցում սասանեանք և բիւզանդացիք միմեանց միշտ անում էին, անգամ պատերազմական գործողութիւնների միջոցին: Նոյնպիսի զօրութեամբ նա վարւում էր պարսկական աշխարհական աւագանու և հոգևորականութեան հետ, որոնց վրայ յենւում էր նորա հայրը: Զօրքի մէջ նա հոգ էր տանում հասարակ զինուորների մասին, բայց վատ էր խնամում ծիաւոր ասպետներին. երբ վէճեր էին ծագում հասարակ ժողովրդի և ազնուականների մէջ, նա դատաստանում առաջնի կողմն էր բռնում և առհասարակ Որմիզդ միշտ հասարակութեան ստորին դասակարգին էր հովանաւորում: Գալով մոգերին, երբ դոքա խնդրեցին Որմիզդից սահմանափակել, վերջապէս, քրիստոնեաների իրաւունքները, նա պատասխանեց, թէ պետութիւնը հաստատուն չիլինի, եթէ քրիստոնեայ հպատակները և ոչ տիրապետող կրօնների ներկայացուցիչները չարացած կլինին. արքայական գահը կանգնում է ոչ միայն երկու առջևի, այլ և երկու յետևի յենարանների վրայ, փոխանակ յարձակուելու քրիստոնեաների և օտարահաւատների վրայ, աշխատեցէք գերազանցել նոցա ձեր առաքինութիւններով, թո՛ղ այդ ճանապարհով հասկանան նոքա ձեր կրօնի վեհութիւնը»: Ինչպէս տեսնում ենք, գրում է պ. Կրիմսկի, Որմիզդ IV-ը յիշեցնում էր Յազկերտ I-ին (399-420) և նա նոյն վիճակին ենթարկուեց, այսինքն, երբ զօրավար Վահրամ Զուբինը քանիցս յաղթելով թիւրքերի խաքանին, միանգամ ինքը պարտութիւն կրեց բիւզանդացիներից Կովկասից դէպի հարաւ, Որմիզդ անարգանքով զրկեց նորան զօրավարութիւնից: Զայրացած Վահրամ Զուբինը ապստամբութեամբ պատասխանեց դորան: Դրան աւագանին օգտուելով առիթից՝ և տապալելով Որմիզդ IV-ին, *) գահ բարձրացրեց նորա որդի Խոսրով II դ. Ապրուէզին (590-628):

---

*) Սեբէոսը փոքր ինչ տարբեր կերպով է բացատրում Որմզդի մահուան պատճառը: «Յայնժամ արարեալ Վահրամայն, այնորիկ

*Այս Խոսրով II-ը, համոզուելով՝ որ չէ կարող գլուխ գալ Վահրամի հետ, որ ինքն էլ կամեցաւ թագաւորել և նորա դէմ ուղարկած զօրքն էլ անցել էր նորա կողմը, փախաւ Բիւզանդիացւոց արևելեան սահմանները և սահմանակից Կիրկեսիա քաղաքից աղաչանաց թուղթ գրեց Մօրիկ կայսեր (582-602)։ Քաջարի Մօրիկը, նախընթաց կայսեր Տիբերիոս I-ի փեսան, իրան համար շատ հաճելի համարեց օրինաւոր ժառանգին բազմեցնել արքայական գահը և թագաւորի «հայր» կոչուել։ Այդ միջոցին Վահրամ Չուբինը թագաւորելով Տիզբոնում, իւր անուամբ արդէն դրամ էր կտրել. սակայն նա մոռացել էր այն հանգամանքը, որ աւագանին և ժողովուրդը Սասանի սերունդից զատ ուրիշ թագաւոր երբէք չէր ճանաչում. ուստի երբ Մօրիկի զօրքերը 591 թ. Խոսրովի հետ մտան Միջագետք և սկսան մինը միւսի յետևից նուաճել պարսկական քաղաքները, բնակիչները և բուն իսկ Վահրամի զօրքն էլ Մծբնի մօտ յօժարակամ միացան Խոսրովին, Բիւզանդացիք յաղթանակով մտցրին Ապրուէզին Տիզբոն մայրաքաղաք. Վահրամ Չուբինը *) փախաւ Թիւրքեստան և այնտեղ սպանուեց»։*

---

*պատերազմն ընդ մեծի արքային Մազքթաց (իմա խաքանին Թիւրքաց)... յայնկոյս գետոյ մեծի (Օքսուսի), եհար զբազմութիւն զաւրացն, և եսպան զթագաւորն 'ի պատերազմի, և ըմբռնեալ յափշտակեաց զամենայն զգանձ թագաւորութեանն այնորիկ»։ Աւարի մի փոքր մասն Վահրամ ուղարկում է Որմզդին, մեծագոյնը բաժանում է զօրքի մէջ։ Դժգոհ Որմիզդ իւր համահարզներին և փուշտիպաններին արձակելով Վահրամի բանակը, պահանջում է բոլոր գանձը։ Զօրքը սպանում է թագաւորի հաւատարիմներին և Վահրամին թագաւոր է հռչակում։ Մի այլ տեղում Սեբէոսը աւանդում է, թէ՝ Եւ ժողովեցան ամենայն նախարարք և զաւրագլուխք և զաւրք ի դահլիճն արքունի... և մտեալ 'ի սենեակ արքայի կալան զթագաւորն Որմիզդ, և անդէն վաղվաղակի փորեցին զաչս նորա և ապա սպանին։ Եւ նստուցին զորդի նորա թագաւոր, ի վերայ աշխարհին Պարսից. (տես էջ. 30, 31, 32. Սեբ. Ս. Բուրգ 1879)։ Մ. Շ.*

**) Սեբէոս աւանդում է, թէ Վահրամը իմանալով, որ Հայերը Մուշեղ Մամիկոնեանի զօրավարութեամբ պատրաստ են աջակցելու Խոսրովի և Մօրիկի զօրքերին, հետևեալ ուշագրաւ հրովարտակն է*

Բարեկամական դաշնադրութեան զօրութեամբ, Խոսրով I-նի ժամանակ նուաճուած Դարա, Մարտիրոսաց քաղաքը և Հայաստանի մերձակայ գաւառները անցան Բիւզանդացւոց. բայց

---

գրում Մուշեղին. «Ես այսպէս կարծէի՝ եթէ ես յորժամ ընդ թշնամիս ձեր մարտնչիմ, և դուք 'ի կողմանէ այտի եկեալ՝ ինձ աւգնական լինեցիք. զի ես և դուք, միաբանութեամբ բարձցուք 'ի միջոյ զտիեզերական պատուհասն՝ զտունն Սասանայ։ Իսկ դուք աւադիկ ժողովեալ գայք 'ի վերայ իմ պատերազմաւ յօգնութիւն դմա (Խոսրովու). այլ ես ոչ երկեայց 'ի ժողովելոց երիցանցդ Հռովմայեցւոցդ՝ որ եկեալ են 'ի վերայ իմ։ Բայց դուք Հայք, որ տարաժամ ցուցանէք զտիրասիրութիւն, ոչ ապաքէն տունդ Սասանական եբարձ զերկիրդ ձեր և զտէրութիւն։ Եւ կամ ընդէ՞ր բնաւ ապստամբեցին հարքն ձեր և գնացին 'ի ծառայութենէ նոցա, մինչև ցայսաւր պատերազմեալ 'ի վերայ աշխարհին ձերոյ։ Եւ արդ՝ դիմեալ գայ 'ի վերայ կորուսանել զայնչափ վաստակս ձեր. զի թէ Խոսրով յաղթեալ էր երկոքին դոքա միաբանեալ բարձցեն զձեզ 'ի միջոյ։ Բայց զի հաճոյ թուեսցի ձեզ 'ի բաց կալ 'ի դոցանէ և միաբանիլ ընդ իս, և ձեռն տալ ինձ յաւգնականութիւն։ Եւ թէ ես յաղթեցից՝ երդուեալ 'ի մեծ աստուածն Արամազդ, և յԱրեգակն տէր և 'ի լուսին, 'ի Հուր և ի Ջուր, 'ի Միհր՝ և յամենայն աստուածս՝ եթէ ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւն։ Զո՞ր և դուք կամիք, արասջիք ձեզ թագաւոր։ Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցԿապկոհ և ցդուռն Աղուանից և յԱսորոց կողմանէ՝ զԱրուաստան և զնոր Շիրական մինչև ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արեմուտս մինչև ցԿեսարիա կապադովկացւոց։ Եւ ես մի իշխեցից քան զԱրասպ անցանել յայնկոյս, և զանձն Արեաց թագաւորութեանս բաւական համարեա լիցի ինձ և ձեզ։ Եւ այնչափ ձեզ շատ լիցի՝ մինչև ձեր թագաւորութիւնդ հաստատեսցի»։ Վահրամի յիշեալ առաջարկութիւնները, եթէ միայն դոքա Սեբէոսի հնարածը չեն, շատ հրապուրիչ էին. սակայն Մուշեղն էլ այնքան միամիտ չէր. Նա շատ լաւ ճանաչում էր թէ պարսիկների դարևոր խորամանկութիւնը, թէ Բիւզանդացւոց ոյժը և թէ հայ իշխանների թեթևամտութիւնը. ուստի նա շատերից ծածկեց հրովարտակի բովանդակութիւնը, որ նոր չարեաց դուռը չբացի Հայաստանի համար և քաջութեամբ ու հաւատարմութեամբ ծառայեց Խոսրովին։ Վահրամի երկրորդ գրութեան Մուշեղ խուսափական պատասխան տուեց։ (Սեբ. էջ. 37, 38, 39)։

առհասարակ Իրանի և Բիւզանդական կայսրութեան մէջ նորոգուեցան նոյն սահմանները, ինչ որ էին այս քսան ամեայ պատերազմներից առաջ. ընդ սմին մինչև անգամ Մծբին ամրոցը, որի հանդէպ Բիւզանդացիք պիտի ունենային իրեանց ամրոց Դարան, Մօրիկը թողեց Պարսիկներին»:

Վերև յիշուած «Հայաստանի մերձակայ գաւառներն», ըստ Սեբէոսի, դոքա էին՝ «ետ նոցա (Յունաց) զԱրուաստան զամենայն մինչև զՄծբին և զերկիրն Հայոց՝ որ ընդ իւրով իշխանութեամբ էր, զտուն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեզր ծովուն Բզնունեաց և զԱռեստաւան և զԳողովիտ գաւառ մինչև ցՀացիւն և ցՄակու», (տե՛ս էջ. 45).

«Խոսրով II Պերուեզ (Ապրուէզ) 590-628 հաստատուելով գահի վրայ, հինգ տարի շարունակ պիտի ներքին պատերազմներ մղէր իւր քեռի Վստամի դէմ, որ իրան թագաւոր հռչակեց Մարաստանում, իւր կողմը ձգելով Վահրամ Չուբինի զօրքերի մնացորդը: Նոր վերջացած քսանամեայ պատերազմները Խոսրով I և Որմիզդ IV-ի Բիւզանդացւոց հետ և ներքին կռիւները չափազանց քայքայել էին Իրանի դրութիւնը, սակայն Խոսրով II, չնայելով այդ հանգամանքներին, իրան պահում էր շատ վեհապանծ և փառահեղ, 'ի բնէ թոյլ և երկչոտ, նա սնապարծ էր և սիրում էր փարթամութիւն. Նորա ապարանքը, հանդիսաւոր ելքը և խնճոյքները երևելի էին իրանց շռայլութեամբ և մինչև անգամ գովաբանւում էին յետին ժամանակի պարսկական բանաստեղծներից, այն ինչ ժողովուրդը հեծում էր ծանր հարկերի տակ և նորա ագահութիւնից: Անյաջող էր նաև Խոսրով II-ի ներքին քաղաքականութիւնը քրիստոնեաների վերաբերութեամբ: Ճշմարիտ է, Խոսրով առհասարակ լաւ էր վարւում քրիստոնեաների հետ, որովհետև քրիստոնեայ Բիւզանդացիք նրստացրին նորան գահի վրայ և նոցանից հազար մարդ մնացին Պարսկաստանում իբրև արքայի թիկնապահներ: Խոսրովի վերայ մեծ ազդեցութիւն ունէին նոյնպէս նորա սիրեցեալ կինը բարեպաշտ Շիրին թագուհին և պալատական բժիշկ քրիստոնեայ Գաբրիէլը: Վերջինիս դրդմամբ Խոսրովը անխոհեմութեամբ խառ-

նուեց քրիստոնեաների գործերի մէջ: Գաբրիէլը մոնոֆիզիտ էր. իսկ մոնոֆիզիտները-կատաղի թշնամիք էին նեստորականների և. քրիստոնեայ բնակչութեան մեծագոյն մասն Պարսկաստանում նեստորականներ էին: Առաջ, քանի որ կենդանի էր Խոսրով II-ին սիրելի նեստորական կաթողիկոս և եկեղեցական պատմագիր Սաբր-Իշօ (604), նեստորականները միշտ ունէին բարձր հովանաւոր պալատում և հեղինակօրէն դատապարտում էին իւրեանց ժողովներում հաննանիսների աղանդը, որ նոր էր ծագել մեծ աղմուկով և մօտ էր մոնոֆիզիտականութեան. բայց երբ մեռաւ Սաբր-Իշօն և ազդեցութիւն ձեռք բերեց մոնոֆիզիտ Գաբրիէլ բժիշկը, նեստորականները արդէն հալածանքների ենթարկուեցան, հայրապետական գահի համար ընտրուեցաւ ոչ նոցա, այլ հաննանիտեան թեկնածու: (Հաննանա՝ Մծբինի դպրոցի պետը տակաւին Որմիզդ IV-դի օրերում հրատարակեց նոր կանոնագրութիւն դպրոցի համար և ընդունեց Յ. Ոսկեբերանի քանի մի ուղղափառ հայեացքները, որ հակառակ էին նեստորականների մէջ հեղինակութիւն վայելող Թէոդորոս Մոփսուեստացու վարդապետութեանը. այսու Հաննանա մօտեցաւ մոնոֆիզիտականութեան): Բայց երբ երեք տարուց յետոյ վախճանուեց Գրիգոր Կաշկարցի կաթողիկոսը չըկարողանալով արդարացնել մոնոֆիզիտների ակնկալութիւնները, հայրապետական գահը թափուր մնաց քսանևմէկ տարի մինչև Խոսրովի մահը. առհասարակ հալածուած նեստորականների առաջ առաւելութիւնը տրւում էր մոնոֆիզիտներին, այնպէս որ առաջինները ատելով ատում էին Խոսրով II-դին և, ինչպէս կտեսնենք ստորև, նոցանից մէկը ջերմ մասնակցութիւն ունեցաւ դրան աւագանու դաւադրութեան մէջ ընդդէմ թագաւորի: Իսկ այդ դաւադրութեան շարժառիթ էր Խոսրով II Ապրուէզի վերսկած և անյաջող տևող պատերազմը Բիւզանդացւոց հետ:

Նոր պատերազմի սկիզբը Բիւզանդացւոց հետ շատ փառաւոր էր Պարսիկների համար: Պատերազմի պատճառն այն հանգամանքն էր, որ Խոսրովի անուանեալ «հայրն» Մօրիկ կայսրը 602 թ. տապալուելով սպանուեց կոպիտ արբեցող և

դեղխ Փոկասի *) ձեռքով. Մօրիկի որդու Թէոդոսի և Եդե-սիոյ փոխարքայ Ներսեսի դրդմամբ (Փոկաս այրել էր Ե-դեսիան). Խոսրով իրան վրէժխնդիր յայտարարեց իւր սպա-նուած «հօր». պատերազմը սկսուեց 604 թ.: Բիւզանդա-կան կայսրութիւնը շատ թուլացած էր շնորհիւ Փոկասի ան-պիտան կառավարութեան և Ավարների արշաւանքի և դորա-նով հարկ է բացատրել այն հանգամանքը, որ յրնթացս առաջին քսան տարուայ Պարսից զօրքերը աւարածութեամբ ու անպա-տիժ հասան կայսրութեան հեռաւոր ասիական կալուածները, անցան Հայաստանից ամբողջ Փոքր Ասիան մինչև Քաղկեդոն, որ կանգնած էր Կ. Պոլսի հանդէպ (609, 619-620) և այլն. Խոսրով II Ապրուէզը մասնակցում էր միայն Դարայի (604) նուաճմանը, իսկ միւս քաջագործութիւնները կատարում էին նորա զօրավարները:

Թէ Պարսկաստանն էլ թոյլ էր, չնայած տարած յաղթու-թիւններին, պարզ է, ըստ երևոյթին, մի աննշան հանգաման-քից, որ տեղի ունեցաւ պատերազմի միջոցին Արևելեան կայս-րութեան հակառակ ծայրում, յատկապէս այդ երևում է Զու-կարի ճակատամարտից բէդուինների դէմ. ճակատամարտս կա-պուած է արաբական աւատական Հիրայի թագաւոր Նօման V-դ (580-602) վատ վարչութեան հետ: Թագաւորը իւր անհնա-զանդութեամբ և կամայականութեամբ իւր դէմ գրգռեց Խոս-րով II Ապրուէզին: Հիրայի աւատական թագաւորների կամա-յականութիւնը հաճելի չէր Պարսից նախկին միապետներին էլ, սակայն նոքա հաշտուում էին դորա հետ, հասկանալով թէ այդ աւատական սահմանային իշխանութիւնը Իրանի համար մի պա-տուար էր բէդուին (արաբացիների) հրոսակների արշաւանքների հանդէպ Արաբիայի անապատից: Քաջ ըմբռնելով այդ՝ Խոսրովի նախորդ, Որմիզդ IV Հիրայի գահի վրայ բարձրացրեց Նօման V-ին 580 թ. Հիրայում դորանից առաջ թագաւորի բացակա-յութեան շնորհիւ, երկպառակութիւններ էին ծագել և Որմիզդ

*) Ֆրանսիացի ակադեմիկոս Շլիւմբերժէ Փոկասին հայ է համարում. տես նորա ստուար գրուածքը Բիւզանդական կայսրու-թիւնը IX դարում: Մ. Շ.

IV-դ շահը իւր մօտ կանչել տուեց բոլոր թեկնածու արքայազուններին, նոցա միջից ընտրելու համար յարմարագոյն կանդիդատին և հաստատելու Հիրայի գահի վրայ։ Նոման արքայազնը ճարպիկութեամբ շահեց դրան խորհրդականների սիրտը և սոցա թւում Ադիա իբն-Զեյդին, շահի քարտուղարին ու թարգմանչին, որ քրիստոնեայ-արաբացի էր (և հռչակաւոր բանաստեղծ էր)։ Նա բաւականին մեծ գումար էլ տուեց իրան շահին և աւագանուն և վերջնականապէս իւր կողմը ձգեց նոցա այն իսկ օրը, երբ հերթով տասներեք եղբայրները ներկայանալով շահին, լսում էին նորանից միևնոյն հարցը․ կարո՞ղ ես արդեօք թափառական արաբացիների առաջն առնել և չթողնել Իրան մտնելու. մի հարց, որով ձևակերպւում էր Իրանի սահմաններում արաբական Հիրայի թագաւորութեան գլխաւոր պարտականութիւնը և նորա raison d'être-ը։ Արքայազուններից իւրաքանչիւրը պատասխանում էր, կարող եմ, միայն Նոմանի հետ գլուխ գալ դժուարանում եմ. իսկ Նոման միևնոյն հարցին պարզապէս պատասխանեց Որմիզդին․ կարող եմ. ապա, եղբայրներիդ կզսպե՞ս, շարունակում էր շահը փորձել և ստացաւ արհամարհական պատասխան՝ եթէ բոլոր արաբացիներին կարող եմ զսպել, եղբայրներիս աւելի հեշտ է։ Այն ժամանակ շահը հաստատութեան հրովարտակը տուեց նորան և Նոման V բազմեց Հիրայի գահի վրայ, և մնաց 22 տարի (580-602) և կարողացաւ բաւականին ծառայութիւններ մատուցանել Իրանին և թափառականների արշաւանքների առաջ առաւ. Նա օգնեց Խոսրովին Վահրամ Զուբինի ապստամբութեան միջոցին։ Սակայն, ըստ սովորութեան Հերացիների, նա արշաւանքներ էր գործում Հասսանեան Արաբացիների վրայ, որոնք աւատական կախումն ունէին Բիւզանդական կայսրութիւնից չնայելով Խոսրովի և Մօրիկ կայսեր մէջ կնքուած խաղաղութեան։ Նոմանի անհնազանդութիւնը այս և այլ դէպքերում զայրացնում էր Խոսրովին, որի դեսպաններին նա սպանում էր, օր. վերոյիշեալ Ադի-իբն-Զեյդին։ Հիրայի թագաւորութեան վերջ դնելու նախագիծը հասունանում էր և առիթը ներկայացաւ։ Խոսրով II Ապրուէզը ցանկացաւ իւր կանանոցում տեսնել Նոման V-ի

«աչեղ» ղատեր, բայց Հիրայի գոռոզ Թագաւորը, իբրև ճշմարիտ արաբացի, որ անվայել էր համարում աղջիկը օտարութիւն հեռացնել, պատասխան ուղարկեց Տիզբոն շահին, թէ գուցէ բուն իսկ Պարսկաստանում էլ նա կըգտնի իւր համար բաւարար քանակութեամբ աչեղ կովեր։ Այդ պատասխանը լցրեց ինքնասէր և ամբարտաւան շահի համբերութեան բաժակը և նա խորամանկութեամբ հրաւիրելով Նոման V իւր մօտ Տիզբոն, բանտարկեց նորան ու սպանել տուեց, իսկ Հիրայի աւատական իշխանութիւնը Պարսկաստանի հասարակ նահանգ դարձրեց։ Երկու տարուց յետոյ (604) սկսաւ վերջին ժանրագոյն պատերազմը Պարսկաստանի Բիւզանդիոնի հետ և իսկոյն երևեցաւ այն մեծ սխալը, որ Թոյլ տուեց իրան Խոսրով II Ապրուէզը, վերջ դնելով Հիրայի ինքնուրոյն Թագաւորութեան։ Դորա հարաւային դրացիք Թափառական բէդուիններն էին, որոնք օգուտ քաղելով Հիրայի հարստութեան դադարումից, արշաւեցին այնտեղ և բանակ ձգեցին Ջու-կարի մօտ ոչ հեռու Եփրատից։ Նոցա դէմ ուղարկուած Պարսից զօրքը չարաչար ջարդուեց Ջու-կարի ճակատամարտում և այսպէս այն իսկ միջոցին, երբ հիւսիսում, Փոքր Ասիայում պարսիկները փառաւորապէս յաղթելով կայսեր զօրքերը, մօտենում էին Կ. Պօլսին, այստեղ, հարաւում Ջու-կարի պատերազմը շատ աննպաստ կարծիք տուեց Արաբացիներին Պարսից զօրութեան մասին և յետագայ տարիներու մահմեդականները աներկիւղ արշաւեցին դէպի Իրան։

Բայց չնայելով արաբական անապատի մօտ տեղի ունեցած դժբախտ պարագաներին — արևմուտքում Բիւզանդիոնի դէմ մղած պատերազմներում 15-20 տարի շարունակ Ջու-կարի պարտութիւնից յետոյ, յաջողութիւնը Պարսից կողմն էր, Թէև երկչոտ Փոկասին տապալել էլ քաջարի Հերակլ կայսրը (610-641)։ Մի տարի նորա գահ բարձրանալուց առաջ պարսիկները նուաճեցին Եդիսեան (609), ապա անցան Ասորիքը մինչև Անտիոք. Նոր արշաւանքի միջոցին նոքա տիրեցին Դամասկոս քաղաքին (613), ուր առաջ նոքա երբէք չէին եղած և դամասկեան Ասորիքում հաստատեցին իրանց կառավարութիւնը. յետոյ աւերեցին Պաղեստինէն և 614 Թ. յունիսին մտան Երու-

սաղէմ. Տիրոջ կենդանարար սուրբ խաչը գերի վարեցին Տիզբոն։ Նուաճելով Եգիպտոսը, պահեցին այն իրանց իշխանութեան ներքոյ մինչև 618 թ։ Հիւսիսում Պարսիկները բանակով կանգնեցին Քաղկեդոնում Կ. Պոլսի հանդէպ (619-620)։ Հերակլ կայսրը և Կ. Պոլսի աւագանին իզուր էին աշխատում ամօթալի փորձերով հաշտութեան հրաւիրել թշնամուն և կայսրը յուսահատութեամբ մտադիր էր փախչել Ափրիկէ և տեղափոխել մայրաքաղաքը Կարթագինէ. միւս կողմից նորից Աւարցիք յարձակուեցան Բիւզանդիոնի վրայ։ Բայց այդ գործի մէջ մտաւ եռանդուն Սերգիոս հայրապետը և Հերակլը'ի բնէ տատանուող, բայց ընդունակ ուժգին ոգևորութեան, կենդանացաւ նորա ազդեցութեան ներքոյ։ Սերգիոսը գիտաց ներգործելու Հերակլի հոգեբանութեան ամենամթոյլ կողմի վրայ — կրօնական միստիքականութեան և Հերակլ վրէժխնդիր լինել Քրիստոսի համար, Որին հեթանոսները յանդգնեցին անհանգիստ անել մինչև անգամ գագաղի մէջ։ Աւարների յարձակողական շարժման առաջն առին խաղաղութեան բանակցութիւններով (620) և այս կողմից վտանգից ազատուելով, Հերակլ մեծ զօրագնդեր հաւաքեց, մարզեց և ինքը նոցա գլուխն անցաւ (Ապրիլին 622 թ). պատերազմական ծախսերի համար եկեղեցական գանձերն էլ գործ դրուեցան։ Հերակլ ծովով հասաւ Իսսոսի ծովածոցը, այնտեղից մտաւ Կապպադովկիա և մի շարք պարտութիւններին մատնեց պարսիկներին. այս առաջին արշաւանքից յետոյ, որ տասն ամիս տևեց, պարսիկները նորից սկսան յաղթանք տանել դէպի Բիւզանդացիները։ Իւր գլխաւոր արշաւանքը կայսրը սկսաւ 623 թ.։ Նա դարձեալ անցաւ Պոնտոսի երկիրներով, մտաւ Հայաստանի խորքերը և քանդեց Գանձակում (Ուրմիոյ ծովակի մօտ—Դաւրէժ) կրակապաշտների հռչակաւոր բագինը *) 'ի վրէժխնդրութիւն Երուսաղէմի պղծելոյն Պարսից կողմից։ Հետևեալ տարիների ընթացքում նա Փոքր Ասիայում նորանոր յաղթութիւններ կատարելով, և մենք տեսնում ենք, թէ ինչպէս նա անակնկալ կերպով երևում է զանազան տեղերում, մերթ

---

*) Կործանէ և զբագինս Հրատին մեծի՝ որում վշնասպն կոչէին. Սեբէոս. էջ 92. Մ. Շ.

Կովկասում, մերթ Փոքր Ասիայից դէպի արեւելք, մերթ Միջագետքում անդադար յաղթութիւններ անելով: Վերջապէս 626 թ. Խոսրով II Ապրուեզ վճռեց դիմել խիստ միջոցներին: Նա ուղարկեց իւր յաւագոյն զօրավար Շեհրբարազին *) մեծ զօրքով Քաղկեդոն, հրամայելով այնտեղից գնալ Կ. Պօլսի վրայ. իսկ ինքը գրգռեց Ավարներին, Բուլղարներին և Սլաւօնացիներին Բիւզանդիօնի դէմ: Սկսաւ Կ. Պօլսի պաշարումը: Ավարների խանը մերձենալով մայրաքաղաքին, յանդգնութեամբ պահանջեց քաղաքը. միւս կողմից, ջրանցքի յետեւում կանգնած էին պարսիկները. իսկ ինքն կայսրը յայտնի չէր թէ Ասիայի ո՞ր խորքերումն էր գտնւում: Բիւզանդացւոց առձեռն պատրաստ ուժերը այն ժամանակ բաժանուած էին երեք զօրագնդերի. մէկը պաշտպանելու Կ. Պօլիսը Ավարներից, երկրորդը կանգնած էր բանակով Քաղկեդօնում՝ յետս մղելու Շահր Վարազին, երրորդ Հերակլի զօրավարութեամբ գնացած էր Պարսկաստան: Մի ամսուայ պաշարումից յետոյ Ավարները, տեսնելով որ պարսիկները առանց նաւատորմղի չեն կարող անցնել ջրանցքի եւրոպական կողմը, յետ նահանջուեցան Կ. Պօլսից: Այդ միջոցին Հերակլը հրաւիրեց Խազրաց ** խանին, որոնք VI. դարում առանձին խանութիւն էին կազմել Պարսից հիւսիսային Կաւկասեան սահմաններում, մանել Պարսկաստան, իսկ ինքը խաղաց գնաց Իրանի մայրաքաղաք Տիզբոնի վրայ: Խոսրովի շուտափոյթ հաւաքած զօրքը ջարդուեց և Հերակլ (ծննդեան) Աստուածայայտնութեան տօնը Յունվարի 6-ին 628 թ. կատարեց շահի սիրած Դաստակերտում: Սարսափահար Խոսրով II-ը փախաւ անցաւ Տիգրիսի միւս ափը Տիզբոնի այլ մասը: Հերակլ իւր զօրքի սակաւութեան պատճառով անհնարին գտնելով քաղաքի նուաճումը, դարձաւ դէպի Գանձակ, քաջ արշաւանք կատարեց Քուրդիստանի լեռների միջով ձմեռնային բուքերին փետրուար ամսին: Հազիւ թէ նոր էր հեռացել կայսրը, ինչպէս յանկարծ ժողովրդի համար

*) Սեբէոսի մօտ-Շահր վարազ.

**) Սոցա մասին տես Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութիւն», հր. Մ. Էմինի. Մոսկուա 1860.

ատելի դարձած Խոսրովի դէմ դաւադրութիւն կազմուեց. Նորան տապալեցին և շահ հրատարակեցին Կաւատ որդուն, որին հայրը բանտարկել էր։ Կաւատ հրամայեց Խոսրովին սպանել (Փետրուարի 29 628 թ.)։ Գոռոզ Խոսրով II Ապրուէզի ժամանակ թագաւորութիւնը հասել էր համարեա թէ Աքիմենեանց օրերի մեծութեանը։

Կաւատ II (628 թ.) գահ բարձրանալով՝ սպանել տուեց իւր 18 մրցակից եղբայրներին, խաղաղութիւն խնդրեց Հերակլից և հրամայեց պարսկական զօրքերին դուրս գալ Ասորիքից։ Շուտով նա մեռաւ և թագաւորեց նորա եօթը տարեկան Արտաշիր III որդին (628-630)։ Սորա ժամանակ նեստորական կաթողիկոս Իշօ-Եաբը կենարար Սուրբ Խաչը Տիզբոնից բերեց Հերակլին, որ հանդիսաւոր կերպով կանգնեց Երուսաղեմում։ Արտաշրի հետ Հերակլ չկարողացաւ խաղաղութեան դաշն կապել, որովհետև երևելի զօրավար Շահր վարազը՝ Հերակլի հաւանութեամբ, իրան թագաւոր հռչակելով՝ սպանեց մանուկ Արտաշիր III-ին։ Բայց ամիս ու կէսից յետոյ ինքն էլ չարաչար մահով մեռաւ աւագանու ձեռքից, որ չէին կամենում, որ իրանց վրայ թագաւորէ իրանց հաւասար մի իշխան, որ սասանական տոհմից չէր։ Գահ բարձրացաւ Խոսրով II-դի դուստր՝ Պուրանդուխտ (ըստ Սեբէոսի Բօր, դուստր Խոսրովայ) 630-631. սորան յաջորդեց նախ ոմն Պերոզ*, ապա քոյրը Ազարմի-դուխտ, որ մեռաւ Ռոստոմ զօրավարի ձեռքից։ Մի առժամանակ մեծամեծները պահպանում էին Փերրոխ-զադէ Խոսրովին, իսկ ուրիշները Խոսրով II թոռն Յազկերտ III-ին գահ բարձրացնելով Փարսում, սպանեցին Փերրոխ-զադէ Խոսրովին։ Նոր և վերջին սասանեան թագաւորի գլխաւոր խորհրդականն էր քաջ Ռոստոմ զօրավարը, որը սակայն չկարողացաւ փրկել Իրանը Արաբացիների տիրապետութիւնից և Յազկերտ III սպանուեց (651) Մերվում և Սասանեանց հարստութիւնը վերջացաւ։

Պրոֆ. Կրիմսկու այս երկը մենք տեղ տեղ թարգմանեցինք բառացի, երբեմն էլ քաղուածօրէն աւանդեցինք նորա բովան-

---

*) Սեբէոսի մօտ—Խոսրով ոմն յազգէ Սասանայ.

դակութիւնը, զանց առնելով գրուածքի այն մասերը, որոնք վերաբերում են Պարսից և Ասորոց գրականութեան. և որովհետև այս վերջինս, ինչպէս յայտնի է, մի ժամանակ մեծ ազդեցութիւն ունէր Հայոց նախկին դպրութեան վերայ, այդ պատճառով մի ուրիշ անգամ մենք կվերադառնանք դորան և կաշխատենք պատրաստել մի առանձին մենագրութիւն Ասորոց գրականութեան մասին: Սասանեան այս պատմութիւնը շատ հետաքրքիր է այն տեսակէտից, որ պարզ գաղափար է տալիս մեզ Պարսկաստանի ներքին և արտաքին՝ գործերի ընթացքում մըշակուած, որոշ քաղաքականութեան մասին. բիւզանդացւոց կայսրութիւնն էլ իւր յարաբերութիւնների մէջ օտար պետութիւնների ու ազգերի հետ, ամենից առաջ դերադասում էր պետութեան շահերը և ըստ այնմ վարում էր իւր քաղաքականութիւնը: Դորանից զուրկ էր միայն Հայաստանը, որի աշխարհագրական դիրքը երկու մեծ տէրութիւնների մէջ՝ շատ յարմար էր մեծ և նշանաւոր պատմական դեր կատարելու Փոքր Ասիայում: Բայց սորա համար հարկաւոր էր փոխել Հայաստանում ներքին կառավարութեան ձևը, վերջ դնել աւատական կարգերին և ստեղծել կենդրոնական հզօր և միահեծան իշխանութիւն, ընդհանուր օրէնք բոլոր բնակչութեան համար պարտաւորիչ: Սակայն Հայոց նախարարութիւնը, իշխանները և սեպուհները չհասկացան ժամանակի պահանջները, նոցա համար, կարծես, ազգային շահեր գոյութիւն չունէին բնաւ: Եթէ նոցա հոգեբանութիւնը պարզելու դիտաւորութեամբ, մի բոպէ սլանանք հին հին դարուց խորքերը, մենք այն ժամանակ կտեսնենք, որ հայ իշխանները և նախարարները Արշակունեաց օտար հարստութիւնը ընդունեցին Հայաստանում իբրև մի աւելորդ շռայլութիւն, որի հետ, այո՛, երբեմն կարելի է հաշտուել, եթէ միայն դորանից իրանց շահերին վտանգ չէ սպառնում: Իսկ երբ Թագաւորը խօսում էր և գործում Հայաստանի ընդհանուր շահերի տեսակէտից, նախարարներին անհասկանալի էր նորա լեզուն. կփորձէր թագաւորը պնդել իւր պահանջների վերայ և ահա իշխանների դաշնակցութիւնը պատրաստ էր զէն 'ի ձեռին պաշտպանել իւր իրաւունքները: Ինչպէս յայտնի է, Վռամ IV Կրմանի

և Թէոդոս Մեծի ժամանակ 390 Թ. Հայաստանը բաժանեցին երկու մասերի՝ Պարսից և Հռովմայեցւոց մէջ. հայ նախարարները չբողոքեցին դորա դէմ. 429 Թ. Վռամ V-դը վերջ դրեց Արշակունեաց Թագաւորութեան Հայաստանում. Նախարարները դարձեալ ձայն չհանեցին ու լուռ մնացին։ Ի՞նչով պէտք է բացատրել այս, ըստ երևոյթին, տարօրինակ վարմունքը հայոց աւագանու. նոցա կալուածական իրաւունքների ապահովութեամբ միայն, կպատասխանենք։ Արշակունի Թագաւորները գահ բարձրանալով, ամենից առաջ վաւերացնում էին իշխանների հին, նախնական արտօնութիւնները և դարևոր իրաւունքները։ Հայաստանը անցնում է Պարսից տիրապետութեան տակ, արքայից արքաները, հետևելով հայ Արշակունեաց օրինակին, նոյնպէս ճանաչում են նախարարների իրաւունքները, անհնազանդութեան առիթ չտալու համար նոցա։ Պարսիկ մարզպանը կեղեքում է ժողովուրդը ծանր հարկերի տակ կամ բռնադատում է կրօնափոխութեան, հայ նախարարները իսկոյն մի Մամիկոնեանի ղեկավարութեամբ ապստամբւում են, սպանում են մարզպանին, կամ պահանջում են շահից փոխել նորան. պահանջը կատարւում է։ Մի ուրիշ անգամ նոքա խնդրում են տալ նոցա հայ մարզպան — Թագաւորից մերժում չկայ, վասն զի նորան հարկաւոր է միայն Հայաստանից հարկեր ու տուրքեր ստանալ։ Նոյն զիջողութեամբ են վերաբերւում հայ իշխաններին նաև Բիւզանդական կայսրները, որոնց մի քանիսը հայկական ծագումից են և հաւատով հայ-հոռոմ։ Այսպէս դարերի ընթացքում մեր իշխանները երեք կողմից երես առնելով, իւրեանց կալուածներում մի մի փոքրիկ բռնաւորներ են հանդիսանում ստորադրեալների վերաբերութեամբ, ժողովուրդը հլու հպատակ է նոցա ձեռքում, ճորտութեան հասցրած։ Այսպիսի ըմբոստ և ամբարտաւան իշխանների խելքը կարո՞ղ էր արդեօք կտրել, թէ ի՞նչ ասել է ազգային ընդհանուր շահեր, ազգային քաղաքականութիւն, երբ նոքա ազգի ոյժերը ջլատում էին, ամբողջ գնդեր ու զօրաբաժիններ կազմակերպելով և հեռու հայրենիքից կռուելով Պարսկաստանի և Բիւզանդական կայսրութեան պայծառութեան համար 'ի փառս մայր հողի և հայրենիքի։

Եթէ այժմ հին դարերից վերադառնանք արդի իրականութեան, մեզ համար պարզ կլինի, թէ ինչու հայութիւնը հասաւ այսօր այսպիսի ողորմելի դրութեան։ Մեզ վիճակուեց վայելելու մեր նախնեաց բոլոր ոգին, դորա բացասական յատկութիւններով։ Մենք ժառանգեցինք հայ իշխանների և նախարարների հոգեբանութիւնը. անցեալից ոչինչ չմոռացանք. իսկ վերջին չարիքներից չխրատուեցանք։ Ազգիս չարն ու բարին լաւ հասկանալու համար, հարկ է ուշի ուշով ուսումնասիրել մեր հին պատմութիւնը, զուգընթացաբար դրացի պետութիւնների և ազգերի պատմական վիճակների հետ, որոնք ահագին ազդեցութիւն են թողել հայոց վրայ։ Հայերը երկնքից չեն ընկել և ինչպէս Խորենացին չէ կարելի բացատրել Խորենացիով, այնպէս էլ հայոց պատմութիւնը չէ հնար բացատրել նոյն պատմութեամբ։

Մ. Տավրեան

# ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԹՈՒՂԹ

*Նախնեաց սահմանադրութիւնը հաստատելու Էջմիածնի սուրբ Աթոռի կաթողիկոս ընտրելու ձևի և հաստատութեան մասին. նոյնպէս և նորա սպասաւորների, գործակալների և նուիրակների պաշտօնավարութեան մասին։*

---

*Յիսուս Քրիստոսի ծառայ Տէր Ղուկաս կաթողիկոս և ամենայն Հայերի ծայրագոյն պատրիարք...*

*Եւ աստուածային օրհնութեանս և այս սիրաձիր նամակի ողջոյնի հետ՝ յայտնուած լինի մեր սիրելի և հարազատ որդիներիդ և սուրբ և մեծ աթոռ Էջմիածնի հարազատ զաւակներիդ։ Որովհետև Աստուծուց իմաստնացած Սողոմոնն ասում է, թէ մի փոխի այն յաւիտենական սահմանները, որ գրել են քո հայրերը։ Եւ սրբազան առաքեալ Պօղոսը գրում է՝ պինդ պահեցէք այն աւանդութիւնները, որ սովորեցիք ևայլն։ Արդ՝ մեր նախնի երջանիկ և սրբազան հայրապետները զգուշացնելով իրանց հետևողներին ամեն անբարի և հոգեվնաս բաներից, հասարակաց բարւոյ և օգտի համար կանոնել և աւանդել են լաւ լաւ կարգեր և օգտակար սահմանադրութիւններ, նրանցով և նրանց համեմատ վարուելու Աստծու բարեսէր հաճոյքի և մեր անձերի խաղաղութեան համար։ Եւ ովքեր նրանց հետևողներ են և աշակերտած, եթէ ճշմարտասիրութեամբ նրանց աստուածահաճոյ կանոններով և կարգադրութեամբ են վարւում, նրանցով ինչպէս ամրափակ ցանկով պատսպարուած պահպանւում են և խաղաղութեամբ ապրում են հոգով և մարմնով։ Բայց եթէ դուրս*

*կգան հայրենի կարգերից ու կանոններից, արդարև զրկւում են նրանց պահպանութիւնից, և անպատսպար մնալով՝ ամէն կողմերից հարուածներ և բազմաձևս դիպուածներ։ Ուրեմն ամենքի պարտք և պարտականութիւնն է անփոփոխ պահել մեր նախնի սուրբ հայրերի կանոններն ու սահմանադրութիւնները, որ ինչպէս հայրենի ցանկով պահպանենք անմարմին գազանի յարձակումից և աշխարհի փոթորիկներից ու փորձութիւններից, և ունենանք հոգևոր և մարմնաւոր խաղաղութիւն։*

*Եւ արդ՝ մեր ազգի և Էջմիածնի սուրբ Աթոռի նախնաւանդ և հնագոյն սահմանադրութիւնն է, ինչպէս և մեր սրբազան հայրապետներից քանի քանի աստուածարեալ կաթողիկոսներ կանոնել և հաստատել են, որ այս ընդհանրական սուրբ գահի կաթողիկոսը սրա բոլոր միաբանների և մեր ամբողջ ազգի ընտրութեամբ և համակամութեամբ նստեցնուի, որոնք մօտիկ են և յայտնի սրանց։ Որովհետև՝ Տէր Աղէքսանդր Ջուղայեցի վեհաշնորհ կաթողիկոսը հնագոյն կանոնների հիման վերայ կանոնադրել և կտակապէս աւանդել է իր նամակի մէջ այսպէս. Թէ՝ Երկրորդ, այսուհետև և միշտ, որ ժամանակ էլ լինի, առանց սալահի և մանսարի և վկայական թղթի չորեքծագեան կողմերից, որոնք թեմ, վիճակ և ժողովուրդ են Սուրբ Աթոռիս, և հարազատ որդիք բոլոր եկեղեցիների մայր Վաղարշապատի սուրբ քաւարան Էջմիածնի, ինչպէս նաև միշտ երկու մայրաքաղաքների և արքայանիստ գահերի, այսինքն Իսպահանի և Իստամբոլի, և առանց սուրբ Աթոռիս մեծ ժողովի, ոչ ոքին կաթողիկոս չձեռնադրեն, ևայլն։*

*Այնուհետև Տէր Աղէքսանդր Բիւզանդացի երանելի կաթողիկոսն էլ կնքելով ամենքի համակամութեամբ ընտրուած հայրապետի հաստատուն լինելը, իր կանոնադրութեան մէջ գրում է Թէ՝ Նախ՝ սուրբ Էջմիածնում նստող մեր ազգի հայրապետը, եթէ մեր ամբողջ ազգի համահաւանութեամբ լինի ընտրուած և Հայրապետութեան Աթոռը նստած, հաւատի մէջ լինի ուղղափառ, միաբնադաւան, և ոչ երկաբնադաւան և հերձուածող, գործերով բարի, հասակով կատարեալ, վարքով պարկեշտ, բարքով քաղցր և խոնարհ ևայլն և օրինաւոր խորհրդով պսակուած է հոգեպէս լուսի հարսի հետ (Էջմիածնի) և մեր պանծալի մօր մեր հայկազնեայցս կաթողիկէ եկեղեցու, օրէնք չէ դուրս գցել և հեռացնել նրան հոգևոր և աստուածազոյգ հարս սուրբ եկեղեցուց, որի հետ պսակուած է օրէնքով, և մի ուրիշին փեսայացնել այս հարսին, որի այրը տակաւին կենդանի լինի։ Ուստի ահա կանոններով կնքում եմ և բանադրանքով փակում, որ այսուհետև բանսարկու մարդկանց իրաւունք չտրուի, չարալեզու զրպարտողներին ականջ չդրուի, և*

հայրապետափոխութիւն երբէք և բնաւ չլինի. որովհետև այս բանից շատ վնասներ են ծնւում թէ հոգևոր և թէ մարմնաւոր, և մանաւանդ սուրբ Աթոռիստացուածներին. եայլն։

Նորանից յետոյ էլ Շամախեցի տէր Յակոբ հոգելից կաթողիկոսը իր կանոնների նամակի մէջ, ուր որ սուրբ Աթոռիս հայրապետի համար էլ մի քանի պատուէրներ է աւանդում, ասում էլ է թէ կաթողիկոս պիտի կարգուի Աթոռայիններիս և մեր ամբողջ ազգի կամակցութեամբ, գրելով թէ՝ վեցերորդ պատուէր և կանոն լինի այսուհետև, որ մեր հայրապետի մահից յետոյ՝ երբոր Աթոռայիններիս, խպահանցիների և ուրիշ արևելականների, Կոստանդնուպօլսեցիների և արևմտական Հայկասեր, Քրիստոսին հաւատացող լուսաւորչակրօն և միաբանադաւան ազգերի համահաւանութեամբ ոևէ արքեպիսկոպոս, ուրև լինի նա, ընտրուի ամենայն Հայոց և սուրբ էջմիածնի Աթոռի հայրապետ, նա պարտաւոր է այս չորս կանոնները պահել.—Նախ՝ իր անունը չթողլ տալ որ յիշատակուի ինչպէս Հայրապետ եկեղեցական աղօթքների մէջ մինչև որ Հայրապետ չօծուի։

Երկրորդ՝ նախքան իւր օծուիլը իր թղթի սկզբում որ գրում է մեր ազգին, այս ձևով պէտք է գրէ.—Յիսուս Քրիստոսի ծառայ... արքեպիսկոպոս և կաթողիկոսացու (և կամ կոչմամբ և օծմամբ կաթողիկոս) ամենայն հայոց և մեծ աթոռ սուրբ էջմիածնի, որ Վաղարշապատ քաղաքում, որից ժամանէ ձեզ եայլն։

Երրորդ՝ նախ քան իր հայրապետ օծուելը իր թղթերի կնիքի գիրը հայրապետական անունով չգրէ, որ և կարմրադեղով չքանեցնէ, այլ միածնաէջի և սուրբ Տեղի տիպը, առանց իր անունը գրելու, իր կնքի տեղը եպիսկոպոս գրել տայ, և նրանով թղթի լուսանցքի կողմը ծաղկագրի մէջ կնքէ սևադեղով։

Չորրորդ՝ եթէ կարելի լինի մայր Աթոռ սուրբ էջմիածին գնալը, սուրբ Աթոռից դուրս ուրիշ տեղ կաթուղիկոսայուն չձեռնադրուի և չօծուի Հայրապետ։

Ահա այս յիրաւի ամենալաւ կանոններ ու շահաւէտ սահմանադրութիւններ և օգտակար աւանդութիւններ, հարկաւորապէս ընդունելի և կատարելի, որ առաջուց մենք էլ լսած ենք և տեսել և այժմ էլ քաջ վերահասու եղած։ Բայց հոգելոյս Տէր Սիմէոն կաթուղիկոսի մահից յետոյ թէ ինչ հարկ ստիպեց մեզ այն սովորութիւնից դուրս առանց ամբողջ ազգի կանխաւ իմանալուն ընդունել այս կոչումը, երբ մենք, սուրբ Աթոռի միաբանները և երկրիս բնակիչները վաղօրօք գրեցինք շատ տեղեր, մանաւանդ երկարապէս գրեցինք Կ. Պօլիս, և այժմ համառօտ կասենք. ոչ այնքան աշխատելով մեզ արդարացնել, որքան վնասները կամե-

նալով յայտնել։ Որովհետև հանգուցեալի վախճանուելուց առաջ Տէրը բարկանալով այս երկրի վրայ և սաստիկ խռովութիւն ընկնելով Տեղւոյս իշխողի և Վրաց թագաւորի մէջ, նա մեծ զօրքով վերկացաւ սրա վրայ և իր ձեռքը չկարողանալով սրան հասցնել բերդի մէջ, մեր ամբողջ երկրին կրակ տուեց և ամեն բան աւերեց. և ձեռքն ընկած ժողովրդներին քշեց իր իշխանութեան կալուածները և այս երկիրը կիսով չափ ամայացրեց. որից թէ սուրբ Աթոռին ինչպիսի և ինչքան վնասներ հասան, այստեղ չենք երկարում, կարող էք իմանալ գործի որպիսութիւնից։ Եւ այնպիսի վրդովման մէջ երկրականներիս կառաղինները տեսնելով իշխողին նուաճուած, շատերը մի կողմ ապստամբեցին և սկսեցին Տեղւոյս Մնացեալ ժողովրդին ասպատակել, և շատերն էլ առաջուանից աւելի չարացած՝ հէնց այստեղ կեղեքում էին հասարակ ժողովրդին, և մեծամեծ վնասներ էին հասցնում սուրբ Աթոռիս և ուրիշներն էլ ուրիշ կերպ դառնացրին ժամանակը ամեն կերպով։ Եւ որովհետև հաշտութիւն չէր կայանում Վրաց թագաւորի և երկրիս իշխողի մէջ, և ասում էին թէ նորից գալու է նա սրա վրայ և իսպառ աւերելու է երկիրս, ուստի և տաճկաց մեծամեծները սպառնում էին Աթոռայիններին՝ որ եթէ նա գայ՝ իսպառ կդատարկեն Աթոռս և կամայացնեն, որպէսզի ույժ չտանք Նրան։ Որպիսի դառնութիւններին և չարիքներին չկարողանալով տանել բազմավիշտ Հայրապետը, այնպէս հիւանդացաւ անձնամաշ ցաւով, որ էլ ոչ մի դեղ չօգնեց Նրան, և երկար ժամանակ կրելով՝ իմացաւ իր կեանքի ճարը, ըստ որում ծերութիւնն էլ դէպի մահ էր հրաւիրում։ Ուստի լուսահոգին նախահոգալով թէ՝ ինձանից յետոյ սուրբ Տունս երկար ժամանակ անտէր չմնայ այսպիսի դառը ժամանակի մէջ և մեծապէս վնասուի, կտակել էր մեր անարժանութիւնը նստեցնել այս պաշտօնի։ Եւ երբ փոխուեց առ Քրիստոս, մի քանի օրից յետոյ սուրբ Աթոռիս բոլոր միաբանները և երկրիս մերազնեայ ժողովրդի մնացորդները ժողովելով սուրբ Աթոռումս, մտածեցին սրա օգուտը և միաբանութեամբ ստիպեցին մեզ յանձն առնել այս պաշտօնը և ինչքան էլ հրաժարուեցի՝ աւելի ևս ստիպեցին, ասելով թէ՝ դու կլինես այս սուրբ Տան վնասուելու պատճառ։ Եւ մենք տեսնելով որ առանց մեր կողմից ոչ ոքին աղաչելու, կամ մէկն ու մէկին կեղծաւորելու, և ոչ էլ ինքս ինձ որևէ ախտով առաջ գցելու, այլ առանց իմ կողմից ազդեցութիւն գործելու Նրանք բազմութեամբ ստիպում էին պղտորուած ժամանակի բուռն պատճառներից ստիպուած, ուստի և մենք շատերի ձայնը՝ Աստծու ձայն համարելով, (ինչպէս որ ասում են), այլ և վստահանալով մեր օրհնուած ազգի նախածանօթ

լինելուս վրայ, յանձն առանք, որ գոնէ անարատ հարսի քողը պահենք իր երեսին, և վախճանապէս մեղադրանք չլսենք մեր ազգից։ Ապա՝ որովհետև Գանձակեցին էլ, որ արտաքսուած էր իր վիճակից և Վրաստան ընկած, աշխատում էր աշխարհական բռնութիւնով տիրել սուրբ Գահին, ինչպէս որ հաւատացնում էին գրով ու խօսքով, այս պատճառով Աթոռայիններս և երկրիս ժողովուրդը օծեցին մեզ կաթողիկոս, առանց այլ ևս ուշացնելու։ Ահա այս պատճառներից հարկադրուած այսպէս եղաւ մեր կանչուելն ու օծուելը և ոչ թէ ուրիշ կերպ։ Ճշմարիտ եմ ասում՝ ի Քրիստոս և չեմ ստում, Առաքեալի խօսքի համեմատ. որոնք Աստուծուն յայտնի են և բոլոր մերձաւորներին ծանօթ, որ մենք ոչ թէ անձնընծայ եղանք, որովհետև գիտենք Առաքեալի ասածը թէ՝ նա չէ ընտրուածը, ով որ իւր անձն է ընծայեցնում, այլ ում որ Տէրն է ընծայեցնում։ Եւ ոչ էլ փառամոլութեան ախտով բարձընտիր եղանք, որոնցից յետին տեղը բռնել սովորել ենք փրկչի աւետարանից։ Եւ ոչ թէ ապրուստի կարօտ ենք, որովհետև մեր օրհնեալ ազգից լիապէս շահուած սուրբ Աթոռիս շնորհիւ՝ ուրիշներին էլ կարողանում ենք շահել և մխիթարել։ Այլ մեր շուրջը եղած բազմութիւնից ստիպուած եղանք և յիշած պատճառներից հարկադրուեցանք մտնել այս լծի տակ, ինչպէս գրեցինք։ Բայց որովհետև սուրբ Աթոռիս միաբաններն ու երկրացիներս միջոց չունեցան՝ բնական սովորութեան համեմատ նախ գրել մեր ամբողջ ազգին և յայտնել և ամենքի գիտութեամբ կատարել այս, այլ մեր կանչուելուց և օծուելուց յետոյ գրեցին բազմակնիք մահսար համահաճութեան մեծ Պոլիս և ուրիշ տեղեր մեր ազգին, այս պատճառով՝ թէև մօտակայ երկրների ու տեղերի ժողովուրդներն ընդունեցին մեզ ընդունողական մահսարներով, սակայն արքայապերճ մայրաքաղաք Պոլսում գտնուած մերազնիներին ծանր թուաց, որ առանց իրաւունք ունենալու չէր, որովհետև բնական սովորութեան համեմատ չեղաւ մեր՝ այս աստիճանի ամբառնալը, որի պատճառով մօտ ութ ամիս ցուրտ սէր երևեցրին և անհամաձայն մնացին։ Եւ թէպէտ ջերմացրին իրանց սէրը մեզ վրայ, և սուրբ Աթոռիս պատուի համար արքունիքից նոմոս հանեցին մեր անունով, և բազմակնիք մահսերի հետ ընդհանուր համահաճութիւն և իրանց գլխաւորների յատուկ թղթերով ուղարկել են մեզ մօտ մեր մահսերատարի ձեռքով և մեր սիրտը շահեցին, սակայն՝ սկզբում շատերի միտքը պղտորուեց, և յետոյ էլ մինչև այժմ մեր խօսքերն ու հոգսերը յաջող չեն առաջ գնում։ Նրա համար, որ հարկը լուծելով օրէնքը՝ չկարողացանք պատսպարուել նախնիքների սահմանած ցանկով։ Եւ որովհետև այսպէս է, և իմ օրերը

ցուցերից պակասել են, ծերութիւնս էլ վրայ հասնելով՝ առաջիկայ մահս է գուշակում, ուստի և՛ի զգուշութիւն մեր ապագային, որ ոչ ոք մեզ օրինակ չվերցնի, և խռովութեան պատճառ լինի, անձ վերահաստատելով սուրբ Հայրապետների վերոյիշեալ կանոնը՝ կտակօրէն դրոշմում ենք այս թղթի վրայ և կանոնադրում, բնաւ կաթողիկոս չդնել առանց մեր բոլոր ազգի գիտութեան, և երեք կանոն էլ ենք գրում, որը դրուած կանոնների համեմատ, և որը սուրբ Աթոռում վաղուց եղածների, որոնք այսուհետև էլ անխափան պիտի կատարուեն։

Չորս կանոններ։

Առաջին՝ Էջմիածնի սուրբ Աթոռի Հայրապետի վախճանուելու դէպքում. մի քանի իշխանաւոր եպիսկոպոսներ վեհարանի դուռը փակելով՝ կըկնքեն, սպասաւորներին ներսից դուրս բերելով՝ հասարակ միաբանների կարգը կըդասեն, բայց փակուած դռների բանալիները թողնելով նախորդ սպասաւորների մօտ, և քանի որ կաթողիկոս չլինի, եթէ սուրբ Աթոռին որևէ բան հարկաւորուի, վեհարանի դռների նոյն կնքողները այն սպասաւորի հետ, որի մօտ գտնւում են բանալիները, միասին բաց կանեն դռները, և պէտք եղածները կհանեն, և դարձեալ փակելով՝ կըկնքեն մինչև նոր կաթողիկոսի նստելը, որ Աստուած պատրաստէ սուրբ գահիս բոլոր միաբանների և մեր ընդհանուր ազգի ընտրութեամբ։ Եւ երբ ընտրելին կընտրուի, ուր և լինի նա, և կգայ նստելու Հայրապետութեան Աթոռը, այն ժամանակ նրան յանձնեն իր տունն ու բանալիները, որ և դռները բացանելով՝ վերահասու կլինի ամեն բանին, և ինքը գիտէ այնուհետև ինչ որ կանէ ըստ կարգին ինչոր հարկն է և պատշաճ։

Երկրորդ՝ Աղէքսանդր Ջուղայեցի սրբազան կաթուղիկոսի կանոնի և Բիւզանդացի տէր Աղէքսանդր և Շամախեցի Տէր Յակոբ երջանիկ Կաթողիկոսների յիշածի համեմատ՝ սուրբ Աթոռի Հայրապետի վախճանուելուց յետոյ բոլոր միաբանները, Առաջնորդները ու քահանաները, և երկրիս մեծազնեայ իշխանները և այն նշանաւոր մարդիք, որոնք գտնւում են այստեղ, ժողովւում են Քրիստոսի սուրբ իջման Տեղիս առաջ և սուրբ Հոգու ազդեցութեան շնորհիւ ընտրելով Հայրապետութեան արժանի արքեպիսկոպոսին, Աթոռից լինի թէ ուրիշ տեղից, և մահսար գրելով մեր բոլոր ազգին, որոնք սուրբ Աթոռիս վիճակ են, և մանաւանդ գերահռչակ մայրաքաղաք Կոստանդնուպօլիս և Ասպահան, և խնդրում են որ ընդհանուր կամքով Կաթուղիկոս ընտրեն նրան. և վերջապէս բոլոր միաբաններիս, պօլսեցւոց և բոլոր ազգի կամքը որ եպիսկոպոսի կողմն էլ լինի՝ նա լինի Կաթողիկոս։

Եւ երբ լինի, տէր Յակոբ Կաթողիկոսի չորս կանոններով վարուի։ Իսկ եթէ ոմանք առանց ամբողջ ազգի գիտութեան և համահաճութեան յանդգնեն ինքնագլուխ կաթողիկոսացնել որևէ եպիսկոպոսի, և նա էլ յօժարելով ընդունի, ինքը չի ընդունուի և անողները պարտաւոր կլինին ազգի խռովութեան և սուրբ Աթոռիս վնասների համար, և նզովք կստանան։ Ուրեմն՝ ինչ հարկադրող պատճառ էլ լինեն, և ինչ կասկածելի վտանգ էլ առաջը տեսնեն, և եթէ սուրբ Աթոռս սաստիկ վնասուելու էլ լինի, այնուամենայնիւ բնաւ առանց ամբողջ ազգի համահաճ ընտրութեան և հաւանութեան ոչոքի կաթողիկոս չպէտքէ դարձնեն, որովհետև դրա վնասն աւելի է ուրիշ վնասներից։

Երրորդ՝ Էջմիածնի սուրբ Աթոռումս կաթողիկոսը վեց գըլխաւոր և ծերունի եպիսկոպոսներ ընտրելով իւրան խորհրդակից պիտի կարգէ, և ամեն բանի վերահասու, ու նրանց գիտութեամբ կանէ գլխաւոր գործերը, ստանալուները կստանայ և տալիքները կտայ։ Եւ այս օտար բան չէ նախնի սովորութիւններին, որովհետև սուրբ տանս շատ բաները գործակալներով է կատարւում, բոլոր եկամուտները նրանց ձեռքով են ստացւում և մատեան մուծւում և ծախսն էլ նրանց ձեռքով է լինում և մատեանով։ Ուրեմն ամեն ժամանակուայ կաթողիկոսի մօտ գտնուած Արքեպիսկոպոսը և Տեղապահը և Աթոռակալ կոչուած գործակալը, և սուրբ Տաճարիս մեծ լուսարարը, և ժամօրհնողը և դարպասչին պէտք է խորհրդակից լինեն կաթողիկոսին և մտերմաբար աչքի անցնողներ բոլոր գործառնութիւններին, սուրբ գանձիս թէ ելքին և թէ մուտքին։

Չորրորդ՝ կանոն և պարտք պէտք է լինի սուրբ Աթոռիս նուիրակներին (Տէր Յակովբ սրբազան Կաթողիկոսի և մեր գրած խրատների համեմատ), որ ուր և գնան, ամեն բանի մէջ համեստ և պարկեշտ լինին, իրանց կարողութեան համեմատ առաքինավար և ուղղաքարոզ, և վիճակների Առաջնորդների յատուկ գործերին չխառնուեն, և Առաջնորդների ու սուրբ Երուսաղէմի նուիրակների հետ սիրով և քաղցրութեամբ վարուեն։ Իսկ նրանց համար էլ կանոն և պարտք լինի, սրանց հետ էլ նոյնպէս վարուել և երկու կողմից եղբայրսիրութեամբ պատուելու մէջ մէկմէկուց գերազանցել, և ժողովրդին բարի օրինակ լինել, և կռուից ու աղմուկից միշտ խոյս տալ։ Այլ և մեր նուիրակները սուրբ Աթոռիս արդիւնքները չվատնեն, և իրանց գործը աւարտելուն պէս դուրսը չմնան, և երբէք հեռուից չտան իրանց հաշիւը, այլ իսկոյն վերադառնան սուրբ Աթոռը և այստեղ տան իրանց արդիւնքի հաշիւը։ Մանաւանդ՝ պարտաւորաբար խաղաղ և քաղցր վարուեն ժողովրդի հետ, մեղմութեամբ յորդորեն նրանց սուրբ Աթոռին տուրք տալ

և ոչ թէ բարձրութեամբ և չափաւոր կերպով խնդրեն այն, ինչպէս կթելիքից կաթը և ոչ թէ պտուկները ճմլելով, որ արիւն դուրս գայ, իմաստունի խօսքի համեմատ թէ՝ և այս ամենի վրայ, մարմնաւոր ինչքի համար երբեք ոչ ոքին թող չբանադրեն, որ իրանց վրայ հետ կդառնայ։ Այլ ովքեր աստուածային օրէնքների ու պատուիրանների կանոնների հակառակ գործ լինեն արած կամ անելիս լինեն, որևէ բան ասած լինեն կամ ասեն ամբարշտութեամբ, և կամ դէպի սուրբ Աթոռս գլխաւոր չարիք և վնաս գործեն, և արժանի լինեն կապանքի, նրանց բանադրեն. և այն էլ հաւաստի տեղեկանալով և ապա թէ բանադրել յօժարելով։ Եւ այսպէս ամեն բանի մէջ ուղղամտաբար, խոհեմ և բարի քաղաքավարութեամբ վարուեն ամենքի հետ, ինչպէս որ վայել է Քրիստոսի պաշտօնեայի և սուրբ մեծ Աթոռից ուղարկուածին. և մխիթարելով շահեն ժողովրդին և շահուին նրանցից. և սուրբ Աթոռս էլ փառաւորեն իրենց բարի գործերով։ Իսկ եթէ նուիրակներից մէկը սրանց հակառակը գործէ, վիճակի ժողովուրդը երկու կամ երեք անգամ պիտի գրեն սուրբ Էջմիածին, Կաթողիկոսին՝ նրան դատելու. և դա այդպիսուն պիտի դատէ ըստ արժանւոյն և յետ կկանչէ սուրբ Աթոռը։ Եթէ օսմանցոց տէրութեան մէջ դատուողներից մէկը մերազգի կամ այլազգի մարդկանց օգնութեան դիմէ և անհնազանդութիւն ցոյց տայ հայրապետին, այն ժամանակ Կաթողիկոսը պիտի գրէ Պոլիս ժամանակի Պատրիարքին, ով էլ որ լինի նա, նրան արքունի հրամանով սուրբ Աթոռ ուղարկելու և նա մերային իշխանների գիտութեամբ պիտի կատարէ Կաթողիկոսի գրածի համեմատ։

Բացի այս ամենի հետ մէկտեղ հոգևոր հայրութիւնից ստիպուած Աստծու սիրով պատուիրում եմ, ոչ թէ միայն այս ամենը պահել, այլ բոլոր ուժով աշխատել միանգամայն պահելու մեր սրբազան հայրապետների ու վարդապետների օրինադրած կանոնները, բնատուր բարի աւանդութիւնների և Աստուածային և առաքելական օրէնքների ու պատուիրանների հետ, ինչպէս ասում է Յակոբ սրբազան առաքեալը, թէ՝ ով որ բոլոր օրէնքները կպահէ, և մի որևէ բանով կդրժէ,բոլոր օրէնքներին պարտական կմնայ եայլն։ Արդ՝ եթէ բոլոր օրէնքներ պահելը և միայն մէկի դէմ մեղանչելը բոլոր օրէնքների դէմ յանցաւոր լինել կնշանակէ, հապա ի՞նչքան աւելի է շատ օրէնքների զանց անելը։ Ուստի և խնդրում եմ մեր սիրելիներից և հարազատներից, միշտ աշխատել Աստծու բոլոր օրէնքներն ու պատուէրները և նախնի սուրբ հայրապետների կանոններն ու բարի աւանդութիւնները յիշեալների հետ միասին պահել, որպէսզի

կարելի լինի այնպէս խօսել և այնպէս անել, որ ազատութեան օրէնքով կարելի լինի դատել նոյն առաքեալի ասածի համեմատ։

Արդ՝ մեր սիրելի և հոգևոր որդիք, Էջմիածնի սուրբ Աթոռի լուսածնունդ զաւակներ, սորա բոլոր միաբաններ, Հայոց ամբողջ օրհնած ազգ, կարգաւորներ և աշխարհականներ, ահա ոչ թէ մեր երանելի նախնիների կանոնների ու բարեկարգութիւններից դուրս, այլ նրանցից սովորաց և նրանց համեմատ գրեցինք այս կանոնները շատերի խնդիրքով և մեր յօժար կամքով, սուրբ Աթոռիս օգտի, օրհնուած ազգիդ խաղաղութեան և օգտի համար. որ և երկու մի տեսակ օրինակ գրելով՝ և սուրբ գահիս բոլոր եպիսկոպոսներով և քահանայակարգ միաբաններիս կնքելով, մէկը թողինք որ միայն սուրբ Աթոռումս և մէկն ուղարկեցինք Կ. պօլիս բազմաժողով մայրաքաղաքը որ այնտեղ մնայ։

Եւ արդ՝ ովքեր չեն պաչի այս խաղաղարիթ, աստուածահաճոյ և օգտակար կանոնները, որք են սուրբ հայրապետների կանոնների և նախնիքների աւանդի համեմատ, արժանի կլինեն դատաստանի և պատժի, հոգեպէս և մարմնապէս, և պարտաւոր կմնան մեր Հայրապետական պատուէրի և կանոնի և ստորակնքող եպիսկոպոսների և ուրիշ քահանայակարգ միաբանների առաջ, և իրանք կլինեն պարտական Քրիստոսի ահեղ Ատենի առաջ այն բոլոր վնասներին, որոնք կառաջանան իրանց անկարգութիւններից. և մենք անպարտ կլինենք։ Իսկ ովքեր որ հնազանդութեամբ կկատարէք այս գրածները, անպարտ լինիք պատժից, և ազատ խղճից, օրհնուած Աստծուց և մեզանից, և պահպանուած Քրիստոսի սուրբ իջման տեղիս շնորհիւ ամէն։ Ռմլե (1235+551=1786) և դեկտ. 31. Լուսակառոյց սուրբ Աթոռ Էջմիածնում։

# ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ[1]

## ՀԻՆԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵԽՏԻ

---

## V

## ՏԻԵԶԵՐԱՊԱՏՄԱԿԱՆ ՊՐՕԲԼԷՄՆԵՐ.

Անցեալ ժամին զբաղուեցինք կուլտուրական ժամանակներով, նրանց ընդհանուր հոգեկան բնոյթով, հոգեկան այն մեխանիկայով, որ նրանց մէջ երևում է, նրանց, համաձայն դերիշխող ուժի օրէնքին, առաջ գնալուն, որոնք, շնորհիւ շարունակ աճող հոգեկան ուժի, ձգտում են դէպի բարձրացող հոգեկան շերտաւորումը։ Մեր դիտողութեան շրջանը շատ սահմանափակ էր, այդ մարդկային մեծ համայնքների, ազգերի զարգացման շրջանն էր։ Այս շրջանն էլ ունէր մի ուրիշ սահմանափակում. խօսքը այն միօրինակ, բնական ազգային զարգացման մասին էր, որ մի ժողովուրդ իւր դանդաղ ու անընդհատ յառաջադիմութեան ժամանակ, սկսած ամենացածրից մինչև ամենաբարձր կուլտուրական աստիճանին հասնելը ունենում է։ Տեսնումենք, սա մի խիստ մեկուսացրած դէպք է, որը ի զարմանս մեր, մեր աչքի առաջ Միացեալ Նահանգների ամերիկական ազգի զարգացմանը չի վերաբերում կամ առնուազն առանց այլևայլութեան չի վերաբերում, մինչդեռ գերմանական ազգի զարգացման համար իբրև օրինակ կարող է հիմք ծառայել։

Հասկանալի է, որ այս սահմանափակումը մեթոդի տեսակէտից ըստ ամենայնի արդարացի է, դժուարին գիտական հարցերի վերաբերմամբ դեռևս արժէք ունի divide et impera դարձուածքը. առանց վճռական պարզ դիտակցուած մեկուսացման

---

[1] Լումայ № 7—8

մեթոդի գործադրութեան, յատկապէս պատմագիտութեան ժանր հարցերում, չի կարելի մի մազաչափ անգամ առաջ գնալ։

Սակայն նոյնքան իրաւացի է և այն, որ մեկուսացրած դիտողութեան եղանակը, թէև որոշ չափով սահմանափակ է, իւր ներքին բովանդակութեան համաձայն նախ ի հարկէ չի կարող կատարելապէս սահմանափակ լինել, այնուամենայնիւ ըստինքեան աւելի լայն, առաջ մաշող խնդիրների է մղուելու։ Ամեն մի վերացնող դիտողութիւն ըստինքեան մի այնպիսի դիտողութիւն է, որը դիտելի նիւթի մէջ պարունակուող նպատակներից աւելի հեռուն է գնում։ Այս դէպքում աւելի ևս ստիպում է անել այդ մարդկային համայնքների անմիջական, պարզ, դէպի միութիւնը առաջ տանող կապակցութեան դիտողութիւնը։ Այս նշանակում է մարդկային արարքի ամեն մի խորը, որ նշանակում է կուլտուրական պատմական ըմբռնողութիւնը պէտք է տիեզերապատմական լինի։

Երբ տիեզերապատմութեան անվերջ տարածութեանն ենք մօտենում, առաջին պարտքը պէտք է համարել յայտնելու, որ դասախոսը որոշ երկիւղով է մօտենում։ Ով պատմական մտածողութիւն ունի և տիեզերապատմութեան մի փոքրիկ հատուածը, օրինակ մի ազգի պատմութիւնը, մի քիչ լաւ դիտէ, նրան պէտք է իշխէ պատկառանք, ի նկատի ունենալով մարդկային գործունէութեան անվերջ բազմակողմանիութիւնն ու արդիւնաւորութիւնը։ Այս մասնակի զգացումներից կսկսուին միաժամանակ մարդկութեան փառաբանութեան մեղմ արտայայտութիւններ ելնել, կսկսուի մեր ցեղի մեծութեան դիտակցութեան մէջ խորը և վտանգաւոր խորասուզումը։ Երբ ես պատկերացնում եմ, օրինակ, գերմանական պատմութեան ընթացքը բաժանուած սերունդների, այն ժամանակ այսօրուանից սկսած մինչև Օգոստոսի ժամանակների Արմինուսի դիւցազնական կռիւները հաշւում են մօտ արդէն 60 սերունդ, որոնք պատմութեան մէջ յայտնի գերմանական ազգն են առաջ բերել։ Ես պէտք է երևակայեմ, որ իմ 60-րդ նախահայրը դեռ գերմանական նիզակ ունէր և յամառութեամբ նախ Հռենոսին էր ողջունում և որ 50-րդ նախահայրը կապոյտ հոսանքն իւր ե-

տեն էր թողնում և ուրախութեամբ անցնում էր հռոմէական իշխանութեան տակ խնամքով պահուած և մշակուած դաշտերը։ Այն ժամանակից մինչև այժմ միայն 50 զոյգեր միայն 50 արիւնափոխութիւն. ինչե՛ր չեն տեսել այդ սերունդները մինչև իրենց վերջին թոռը, որը սովոր է նկուղի օդին, մինչև միայն մտքով աշխատողը, որի մկանները թուլացած են, որը անցել է ընդարձակ ծովը, որպէսզի օտար ժողովրդի մէջ և գուցէ նոյն նախահայրերի որդիների մէջ խօսէ իր ազգի դարերի ընթացքում ունեցած կեանքի մասին։ Թող մարդ լցուի այդ ուժեղ, թէև կարճ ժամանակում, մեզ հասած անցեալի զգացումներով, որ զգայ թէ որքա՜ն սարսափելի ու միաժամանակ ամենակարող է այդ։

Սակայն տիեզերապատմական տեսակէտից նայած ի՞նչ նըշանակութիւն ունի 2 հազար տարին և ի՞նչ մի ազգի կարճատև կեանքը։ Ի նկատի ունենալով անցեալ հազարաւոր ու միլիոնաւոր տարիների պատմական յաւիտենականութիւնը և որևէ ազգ, թէկուզ ամենից երկարակեացը, արդեօք չենք կարող սաղմոսերգուի այն խօսքը կրկնել, որով նա եզակի անհատի անցաւոր լինելն է քարոզում. ի՞նչ է մարդը, որ դեռ նրա մասին մտածում էլ են։

Տիեզերապատմական պրօբլէմներին այլ կերպ չի կարելի մօտենալ, քան կրօնական զգացման խորը լրջութեամբ, չպէտք գիտական յաղթահարութեան գործադրած մեթոդները ամբողջովին ի նկատի առնուին, որոնք, գործադրութեան դէպքում բաւականութիւն չեն տայ։

Եզակի կուլտուրական ժամանակների և նրանց կապակցութեան ուսումնասիրութիւնից մեզ տիեզերապատմական շըրջանին տանողը այն հարցերն են, որոնք արտաքին մօմենտներ են, որոնք նոր դրդիչներ կուտակելու և դիզելու պատճառ են դառնում և այսպիսով հոգեկան գործողութիւնների մէջ առաջ են բերում աններդաշնակութիւն և վերջապէս մի ժողովուրդ վերլուծութեան ու համադրութեան բարձր ոյժն է ձեռք բերում, այլև գերիշխող ոյժի մի նոր ձև, սրա հետ միասին և կուլտուրական մի նոր ժամանակ։

Այս մօմենտների մէջ հետաքրքիրներից այս դէպքում առաջին տեղը բռնում են նրանք, որոնք քննուելիք մարդկային հասարակութեան ներքին զարգացմանն են վերաբերում: Սրանք ծագում են մեծ մասամբ տնտեսական և սօցիալական զարգացումից: Ի նկատի ունենալով գերմանական պատմութեան կուլտուրական ժամանակների ծագումը՝ տեսնում ենք, որ նախ սկսւում է նստակեցութիւնը, ապա բնական տնտեսութիւնը, ապա դրամատնտեսութիւնը և վերջապէս ձեռնարկողների տընտեսութիւնը. երբ միւս ազգերի զարգացումն էլ այս տեսակէտից ենք քննում, տեսնում ենք, որ ընդհանրապէս նոյն հետեւանքին ենք հասնում:

Այս դէպքում աչքի է ընկնում մի մօմենտ ևս, որը արդէն մեր ասածի մէջ կար, բայց այժմ պէտք է նորից շեշտել. կուլտուրական ժամանակների անցումները հետեւում են տնտեսական և միաժամանակ սօցիալական նոր ձեւերի անցումներին: Այս կապակցութիւնը ի հարկէ բաւական պարզ է: Ամեն մի կուլտուրական աստիճանի տնտեսական կեանքը որեւէ սօցիալական հոգու ամբողջութեան համար եզակի հոգու բնազդական ու մղման գործողութիւնների նմանութիւն ունի, տնտեսական գործողութիւնների մեծ մասը միատեսակ է կազմուած լինում և սօցիալական անգիտակցութիւն է դառնում, շնորհիւ սովորութեան հիման վրայ արած կրկնութիւններին. համեմատած բարձր հոգեկան կեանքի հետ, տնտեսական կեանքը իր շատ մասերով բուսականի բնոյթ ունի առնուազն այն աստիճան, որքան գործունէութեան եղած ձեւերը պահպանւում են: Ինչպէս սակայն շնորհիւ ներքին յառաջադիմութեան, յատկապէս տնտեսական ուժերի աճելուն մի որեւէ տեղ հաւաքուած աշխատանքը փոխւում է: Այս դէպքում շատ բան, որ սօցիալական անգիտակցութեան մէջ թաղուած էր, արթնանում է, դառնում է սօցիալական գիտակցութիւն, սկսւում է անհանգստութիւն, յայտնւում են զգացումներ և ձգտումներ, որոնք մասամբ, սօցիալական տեսակէտից կենդանանում են և մասամբ հոգեպէս տարրալուծւում: Սա մի այնպիսի դէպք է, որի նմանը կայ անհատական հոգեկան կեանքում. այս դէպքում պարզ

է խնդիրը. տնտեսական անցումները հեշտութեամբ բարձր հոգեկան փոփոխութիւնների ակիզբն են դառնում։

Այս աւելի ևս լինում է այն ժամանակ, երբ սրանք տեղի են ունենում սօցիալական խռովութիւնների պատճառով։ Ո՞ւր է տե՞ղի ունեցել միորևէ տնտեսական յեղափոխութիւն, առանց իւր ետևից բերելու նաև մի սօցիալականը։

Անշուշտ մինչև այժմ բոլոր ասածները բացատրում են, թէ ի՞նչպէս տնտեսական և սօցիալական անցման ժամանակները ընդհանուր, հոգեկան են դառնում և կարող են դառնալ, բայց երբէ՛ք, թէ ինչո՞ւ մինչև այժմ եղած պատմական փորձառութեան հիման վրայ եղած որոշ տնտեսական յեղափոխութիւնների հետ իսկոյն որոշ և միշտ էլ նոյն հոգեկան փոփոխութիւններն են կապուած. ինչո՞ւ օրինակ դրամատնտեսութեան հետ կանոնաւոր կերպով կապուած է անհատականութեան անցման ժամանակը։

Այստեղ պէտք է մի ուրիշ բան ևս յիշել։ Տնտեսական յեղափոխութիւնը առաջ է բերում ոչ միայն հոգեկան խառնիշփոթութիւն, այլ և համապատասխան իւր բնորոշ բնոյթին և խառնիշփոթութեան ընդարձակմանը, առաջ են գալի նոր յատուկ գրգիռների ու զուգորդութիւնների գումարներ, ծրգտումների ու կամքի կեանքի պայմաններ, զգացումների արտայայտութեան հնարաւորութիւններ և այլն, որոնք և դէպի բարձր հոգեկան կեանք են առաջնորդում։ Սա մեծ արժէք ունեցող ուսումնասիրութեան նիւթ կլինէր. մի անգամ տիեզերապատմութեան համեմատական ուսումնասիրութիւններով հաստատել, թէ տնտեսական ի՞նչ արժէքներ ամէն մի ժամանակում առաջ են գալի, որոնք կանոնաւոր կերպով միշտ իրենց հետ բերում են բարձր հոգեկան, յատուկ բնոյթ ունեցող արժէքների զարգացումը։

Այստեղ այդպիսի ուսումնասիրութիւն չի կարող լինել. այս կապակցութեամբ բաւական կլինի այս նոր խնդրի համար իբր ապացոյց բերել այն, որ ազգային ներքին զարգացման ժամանակ կուլտուրական նոր ժամանակի արժէքները ըստ կանոնի

կապուած են տնտեսական ու սօցիալական փոփոխութիւնների հետ։

Տեսնում ենք, որ այս արդէն Մարքսի ուսմունքն է և այս տեսութիւնը այսպէս ասած, անշուշտ շատ անյաջող անուն է, պատմական մատերիալիզմի տեսութիւնն է։

Բայց կարելի՞ է այդ տեսութիւնով բացատրել ամեն ինչ, սօցիալական, հոգեկան յառաջադիմութեան ներքին բոլոր երեւոյթները։ Երբե՛ք։ Գերմանական պատմութեան մէջ ունենք յառաջադիմութեան շատ ուսանելի մի դէպք այն ժամանակ, երբ տեղի է ունենում անձնականութեան անցումը մօտ 1750 թ. երբ սօցիալական տնտեսական տարրերը թէև շատ մեծ դեր են խաղացել, բայց բացատրութեան համար իբր միակը չեն կարող բաւականութիւն տալ։ Այս դէպքում յատկապէս պարզ է, որ հոգեկան տարրերը թէև սօցիալ-տնտեսական հիմքերից, որոշ տնտեսական խաղաղութեան ժամանակ և ոչ տնտեսական յառաջադիմութեան ժամանակ են առաջ եկել և յեղափոխութեան վրայ մեծ ազդեցութիւն են ունեցել։ Եւ ինչո՞ւ չպէտքէ ազդէին։ Այս տարրերն էին՝ նոր կրթութեան իդէալի զարգացումը նախ homo du monde-ի ապա «զարգացած»-ի. տպագրուած ամեն տեսակ բանով հետաքրքրուելու աճումը. անհաւատալի արդիւնաւէտ ամսագրերի, ապա լրագրների գրականութեան աճումը. շնորհիւ բազմաթիւ, աշխատանքից ազատ ժամերի, ընկերակցութեան պաշտամունքի զարգացումը. ժողովրդագրութեան և ճանապարհորդութեան գրականութեան զարգացումը և սրա շնորհիւ ժամանակի և տարածութեան հորիզոնների ընդարձակումը։ Ինչո՞ւ չպէտքէ սրանք հոգեկան գրգիռների ու ընդհանրապէս հոգեկան կեանքի պայմանների մի մեծ գումար առաջ բերէին և սրանով նաև հնարաւորութիւն տային մի նոր կուլտուրական ժամանակի անցման առաջ գալուն։

Եթէ նոյն իսկ միայն մի մարդկային հասարակութեան հոգեկան յառաջադիմութեան ներքին պայմաններն ի նկատի ունենանք, Մարքսի իսկական վարդապետութիւնը և մարքսիստները բաւականութիւն չեն տայ։ Միւս կողմից բոլորովին սխալ կլինէր սրանց մեծ նշանակութիւնը չընդունել։ Ազգային յառա-

ջադիմութեան մէջ, գործող, ղեկավարող ոյժերի զարգացման փաստի շնորհիւ կանոնաւոր, մեծ մասամբ տնտեսական զարգացման, անցքերից տեսնում ենք, որ տնտեսական, սրա հետ նաև սօցիալական զարգացումը բնական զարգացման հիմնական պատճառներ են, որ մնացած բոլոր անցքերը կողմնակի անցքեր են և որ վերջի վերջոյ բացառութիւններ են դրանք, թէև շատ ծանրակշիռ բացառութիւններ. որ ժողովուրդ, որը առանձնացած ինքն իւր ոյժերով զարգանում է, էապէս ուսանելի մի օրինակ կդառնայ որոշ սահմաններում հաստատելու Մարքսի օրէնքի ճշմարտութիւնը։

Ի հարկէ, պարոննե՛ր, չէզոքացրած ժողովուրդի համար որովհետև այս սօցիալիստական վարդապետութեան առանձնայատուկ կողմն է, որ այստեղ ժողովուրդը, համեմատաբար գիտակցօրէն, կամ անգիտակցօրէն այս մտքով է քննւում Գերմանիայում սկսած Ֆիխտէից մինչև Մարքսը և Տիւնէնից մինչև Ռօդբերտուսը։

Պատմական տեսակէտից ոչ մի ազգ այս մտքով չէզոքացած չէ. ընդհակառակը որքան մեր հայեացքը դէպի ետ կարող ենք դարձնել, մինչև մօտ 10 հազար տարուայ պատմական անցեալի մառախուղը, կտեսնենք, որ մարդկային բոլոր համայնքները՝ մեծ թէ փոքր, մասամբ բարեկամական, մասամբ թշնամական յարաբերութիւնների մէջ են իրանց նմանների հետ։ Այս դէպքում հասկանալի է դառնում, որ մինչև այժմ եղած գիտութիւնը լոկ մի սխեմա է զարգացման. որ այս զարգացման ամուր կանվայում դեռ ուրիշ հազարաւոր օրինակներ կարող են տեղ գտնել, առաջ մղող հետ կասեցնող, վերին աստիճանի արագացնող և ոչնչացնող։

Այս տարրերի ազդեցութիւնը առանձին առանձին պարզելու համար, բնականաբար պէտք է սրանց մանրամասն բնութագրենք։

Խօսքը արտաքին անցքերի արած ազդեցութիւնների մասին չէ. օրինակ շրջապատող բնութեան արագափոփոխութիւնների՝ երկրաշարժների, հեղեղումների, հրաբուխների և սրանց նմանների կամ թէ նուաճումների և պետական կամ մարդկային թշնամութիւնից առաջ եկած անձնական ոչնչացումների։ Սր-

րանք ի հարկէ եզակի ժողովուրդների ճակատագիրն որոշել են և ո՞ր ժողովողը, ո՞ր քաղաքական պատմիչը, այժմ էլ այդ թըշուառութիւնների նկարագիրը կթողնի այդ ժամանակները նըկարագրելիս։ Սակայն պատմութեան հոգեբանութեան տեսակէտից սրանք այլ բան չեն ասում, իսկ ֆիզիոլոգիական տեսակէտից միայն այն, որ տեղի են ունեցել փոթորիկներ, ու կենդանիների համաճարակներ։ Սրանք ոչնչացնում են որոշ սօցիալ-հոգեկան անհատներ, ծայրահեղ դէպքում բաւական մեծ ազգեր. կամ թէ արգելումէն ու սահմանափակում նըրանց ներքինի կատարելապէս աճումը։ Պատմական զարգացման տեսակէտից սրանք ոչինչ չեն նշանակում. սրանք մեծ արժէք ունին այն ժամանակ, երբ տիեզերապատմական զարգացման այդ փոքրիկ մասը կազմող ամբողջութիւնը, որ մեզ ծանօթ է, ոչ թէ իբր եզակի երևոյթ հասկացուի, այլ միայն նըկարագրուի։

Աւելի կարևոր է տիեզերապատմական առընչութիւն ունեցող այն անցքերի դիտողութիւնը, որոնց մէջ երևում է պարզապէս մարդկային մի համայնքի զօրեղ ազդեցութիւնը միւսի վրայ, վերջինիս ներքին զարգացման պրօցէսսի վրայ, իբր մշտական ազդեցութիւն, որը շարունակ գործում է։ Այս պատճառով կարևոր է պարզել, թէ ի՞նչ պայմաններում և ի՞նչ երևոյթներում է իրօք այդպիսի ազդեցութիւնը տեղի ունենում։

Պարզ է, որ խնդիրը երկու մասի է բաժանւում. Նախ այն ճանապարհը որոշել, որով այս ազդեցութիւնները տեղի են ունենում և ապա այն անօթները, որոնց միջոցով նրանք հաղորդւում են միւսին։ Առաջին կէտը մեզ տանում է մարդկային համայնքների մէջ գոյութիւն ունեցող յարաբերութիւնների պատմութեանը և այսպիսով մի շրջանի, որը անվերջ տարրեր ու հնարաւորութիւններ ունի, որոնցից ամէն մէկը առանձին առանձին իրեն զարգացման ընթացքով մասերի բաժանել և հասկանալ ըստինքեան տիեզերապատմական ամենամեծ խնդիրներից մէկն է։ Երկրորդ կէտը երկու մասի պէտք է բաժանել. հաղորդակցութեան անօթները կարող են կամ իրենք մարդիկ լինել կամ մարդկային որևէ արտադրութիւն։ Առաջին դէպքը

տեղի է ունենում ամէն անգամ ազգային գաղթականութեան ժամանակ, որքան ի հարկէ սրանք վերջանում են երկու կամ աւելի մարդկային համայնքների միատեղ խառնուած կեցութեամբ. երկրորդ դէպքն է գործիքների, ընդհանրապէս գիւտերի տեղափոխութիւնը, աւելի ևս հոգեկան արժէքների՝ արձաններ, լեզու և գիր (պատկերներ, տառեր, նօտաներ և այլն), տեղափոխութիւնը։ Իբրև օրէնք կարելի է ընդունել, որ ամէն ժամանակ էլ աւելի բնազդական տարրերը և մարդկային համայնքը իբր այդպիսին կազմակերպող կուլտուրան, մանաւանդ տնտեսական և հասարակական կուլտուրայի արժէքները դժուարին են փոխադրուած, որովհետև դրանց փոխադրութեան համար յարմար ճանապարհներ ու անօթներ չկան. սրանով է բացատրւում այն իրողութիւնը, որ տիեզերապատմութեան ընթացքը ըստ էութեան բարձր կուլտուրայի տարրերի տեղափոխութեամբ է կատարւում։

Հնարաւո՞ր է այդ փոխադրութեան ճանապարհների ու անօթների բազմօրինակ միացումները ու յետ ու առաջ դասաւորութիւնները զուտ բանական, միաժամանակ մաթեմատիկական ֆորմուլաներով մի համակարգութեան տակ դնել և իբր մի համակարգութիւն պարզ պատկերացնել։ Երբէք. միայն շատ մանրամասն փորձելը կարող է, շնորհիւ շարունակ եղող տիեզերապատմական համեմատութիւնների մի որոշութիւն բերել. նաև փորձնականօրէն կարելի է գուշակութեամբ պարզ ու տարրական հայեացք ձեռք բերել փոխադրութեան անցքերի վերաբերմամբ, մինչև այժմ կատարած քննութեան ուղղութեամբ։ Երբեմն այս խնդրին վերաբերող հետազօտութիւնները, որքան սրանք պարզուած են կամ սրանց նման մի ընդհանուր հայեացքի տակ կարելի է դնել, սկզբներին են վերաբերում. խնդիրը մեծ մասամբ արտաքին անցքի նկարագրութեանն է վերաբերում և ոչ երբէք ներքինի իմացութեանը, գործի հոգեբանական միջոցին։ Այս դէպքում հաղորդակցութիւնը կարող է յատկապէս տարածութեան կամ ժամանակի միջոցով լինել. առաջին դէպքը ընդունելութեան դէպք է, երկրորդը վերանորոգութեան։ Հաղորդակցութեան ճանապարհը կարող է մի կամ մի քանի անգա-

մուայ լինել, խաչաձև կտրող, երկար ժամանակ տևող, միակողմանի, քննութեան առնուելիք համայնքի նախաձեռնութեանը մատչելի եղող երկկողմանի և այլն. այս տարբերութիւնները երբեմն տարբեր աշխարհագրական, կլիմայական պայմաններին կարելի է վերագրել, երբեմն էլ կուլտուրական տարբերութեանը։ Ի նկատի ունենալով յայտնի ֆիզիքական օրէնքը, մազականութեան օրէնքը, կարելի է այս անցքերից ամեն մէկի համար գտնել համապատասխան միջահոսման. ներհոսման և արտահոսման երևոյթը։ Ինչ վերաբերում է փոխադրութեան անօթներին, պէտք է նկատել, որ կարևոր տարբերութիւն կայ երկար ու կարճ տևող անօթների մէջ. կարճատևներին է պատկանում օրինակ մարդը, երկարատևներին՝ ռասսան և գիրը։ Երկարատևների շնորհիւ հնարաւորութիւն է ստեղծւում վաղուց արդէն մեռած կուլտուրայի առնուազն մասամբ վերակենդանութեան, ուրեմն վերածնութեան ինչ ձևով էլ ուզում է լինի։ Այս մարդկային զարգացման նշանակալից երևոյթներից մէկն է։

Հասկանալի է, որ այս մի քանի խօսքերով միայն տիեզերապատմական ազդեցութեան ճանապարհի ու անօթների տեսութիւնը տրուեց. բաւական է, եթէ այստեղ շօշափուած պրօբլէմի մեծութիւնը որոշ չափով պարզուած լինի։ Ինչքան շատ աշխատելու բան կայ այս շրջանում, ինչպէս ոսկու շերտեր, նման մեծ գիտական գիւտերի, փողոցներում են ընկած նրանց համար, որոնք ուզում են այդ գտնել։

Նոյնքան քիչ պարզաբանուած, բայց հեշտ պարզաբանութեան մատչելի են այն հարցերը, որոնք կապուած են այդպիսի միջհամայնքին, տիեզերապատմական փոխադրութիւնների հետ։ Այստեղ կարելի է հարց դնել ընդարձակման արագութեան, ժամանակի չափի և (ի հարկէ հոգեկան) ազդեցութեան հնարաւորութեան մասին։ Այս հարցերին որոշ չափով պատասխան են տալի մինչև այժմ ծանօթ և սրանց վերաբերող դէպքերը. միաժամանակ օգնում են մասամբ ընդհանուր հոգեբանական ծանօթութեանը առնուազն հարցը ուղիղ դնելու խնդրում։ Ինչ վերաբերում է արագութեան ընդարձակմանը, երևում է, որ առանձնացած տեղափոխուելիք առարկայի հա-

մար որոշ պայմաններում անսահման է, ըստ կանոնի ի հարկէ նախ գործունէութեան տարածուելու շրջանի հետ է կապուած, որին առարկան վերաբերում է։

Որքան էլ այս խօսքը ըստինքեան հասկանալի խօսքի տպաւորութիւն է թողնում, այնուամենայնիւ պէտք է նկատել, որ այս այն դէպքում յարմար է, երբ մի խումբ առարկաների նոյնիսկ ամբողջ կուլտուրաների տեղափոխութեան է վերաբերում։ Նմանապէս այս բանը օտար ամբողջ համայնքը չի հասկանում, այլ միայն նրանք սրան պատկանողներից, որոնք դէպի այդ կուլտուրան առանձին հակումներ ունին կամ յատուկ յարաբերութեան մէջ են մտնում. այս բանը վերաբերում է թէ ընդունելու, թէ վերակազմելուն։ Օրինակ 12-րդ դարու հիւսիսային Ֆրանսիական Պրօվանսի ասպետական իդէալը սկզբում միւս Եւրոպական կուլտուրաներում և վեռական ժամանակ միայն ասպետներն են ընդունել. այսպիսով ասպետականութիւնը իւր տնտեսական և սօցիալական հիմքերով կամ առնուազն իւր սաղմերով կամաց կամաց իւր գոյութիւնը ամրապնդեց։ Դասմիկան աշխարհի բազմօրինակ վերակազմութիւնները հնարաւոր էին այն ժամանակ, երբ ինքնիշխան կամ վերևից ստեղծուած արդէն գլխով աշխատողների զարգացած տարրեր կային, որոնք դէպի դասականն էին նայում, եթէ ոչ նոյնիսկ ցնորքով էին ապրում և սքանչացած իրենք իրենց տեղափոխում էին այդ աշխարհը։

Դրանք ի հարկէ տուած փորձառութիւններ են տարածութեան հարցին վերաբերող. այն սօցիալական հարցերը, որոնք այս դէպքում քննութեան են առնուելու, կարելի է նոյնպէս տարածութեան հարցին վերաբերող նկատել, ինչպէս որ տիեզերապատմական տեղափոխութիւնների ժամանակ երևան են գալի։ Որքան աւելի պարզ, որքան աւելի արժէքաւոր կլինէր եզակի դէպքի ուղիղ քննութեան դէպքում այս տարածութեան հարցի պատկերը, եթէ սա իւր մէջ ամփոփէր ամբողջ, մեզ մատչելի մարդկութեան պատմութեան փորձառութիւնները։

Նոյնպէս արժէքաւոր և պատմական ընթացքի հոգեկան մեխանիկայի ընդհանուր ծանօթութեան համար դուցէ աւելի

կարեւոր է տեղափոխութեան ազդեցութիւնների ժամանակաչափի հետազօտութիւնը։ Այստեղ երեւում է իբր առանց բացառութեան արժէք ունեցող այն, որ այս ժամանակաչափը, որը փորձել են անող մարդկային համայնքի ներքին զարգացման դէպքերի ժամանակաչափի տեսակէտից, շատ շուտ է կաղմուած։ Յաճախ տպաւորութիւնը այնպէս է, որ դրանք միանգամից տեղում են, ներքին զարգացման անցքերի հոգեկան ազդեցութիւնը կարելի է իբր յաջորդական նկատել. իսկ տեղափոխութիւններինը, իբր յանկարծական պատահարներ։ Այս տարբերութեան բացատրութիւնը այսօր աչքի անցկացրած պատմական փորձառութեան շնորհիւ հնարաւոր է, առնուազն, երբ ընդհանուր տեղափոխութիւնները քննութեան առնուին։ Դրանք կամ ստիպուած են տեղի ունենում, ուրեմն ուժով պէտք է փոխադրուեն, արագացրած չափով, կամ թէ ազատ կամքով են լինում, այն ժամանակ նրանք այն դէպքում են զարգանում, երբ անող համայնքը անձկանօք ցանկանում է նրանց, ուրեմն կրկին արագ չափով։ Ի հարկէ իբր մի պարզ հետեւանք պէտք է հանել այն, որ եթէ ամենուրեք նմանօրինակ ռասսայական խառնուածք ենթադրենք, բազմաթիւ համայնքներից այն համայնքի զարգացումը ամենից արագը կլինի, որը ամենից շատ օտար ազդեցութիւններ է կրում իր վրայ։ Սա մի դիտողութիւն է, որը օրինակ յունական պատմութեան ընթացքում համեմատած աւելի նոր ազգերի, օրինակ Ֆրանսիացիների, բախտի հետ, բացատրւում է։

Վերջին դատողութիւնները մեզ տանում են մի ուրիշ պրոբլէմի աշխարհ. այսինքն այն հարցին, թէ ի՞նչ հոգեկան ազդեցութիւն է ստանում տեղափոխութիւնները ստացող համայնքը։ Այստեղ տեղափոխութիւնը պէտք է սկսուի մի քանի տարրական հոգեբանական օրէնքներից, ամենից առաջ զուգորդութիւնից։ Քննութեան պէտք է առնել նմանութեամբ եղող զուգորդութեան օրէնքը։ Ամէն մի հոգեկան անցք միտումն ունի նման տեսակ հոգեկան անցքեր առաջ բերելու։ Այնուհետեւ պէտք է քննել փորձառութեամբ եղած զուգորդութիւնը. մարդկային

* Լիպպս. եր. 44

մի հոգեկան անցք հանդիպում է մի ուրիշին միաժամանակ կամ մէկին անմիջապէս կցւում է մի երկրորդը՝ այն ժամանակ երկուսը դառնում են մի ամբողջութիւն կամ մի ընդհանուր անցք այն ձևով, որ այս ամբողջի մի մասի կրկնութիւնը իւր մէջ ունենում է միւսումն ընդհանուրի ամբողջական կրկնութեան։ Այս օրէնքին կից պէտք է մի ուրիշն էլ առաջ քաշուի, որի համաձայն հոգեկան տպաւորութիւնները այն ժամանակ չեն ամենից ուժեղը, երբ ընդունելու ընդունակութեան և տպաւորութեան ուժի մէջ եղած տարբերութիւնը ամենից մեծն է, այլ այն ժամանակ, երբ կայ մի միջինը այն ձևով, որ տարածութեան ուժի մեծութիւնը և ընդունելու ընդունակութեան փոքրութիւնը իրարից զատուած չեն և իրար չեն բաղխում, այլ իրար հետ համեմատել կարելի է։ Այս տեղից մեզ հետաքրքրող հարցերի համար պարզապէս եզրակացնում ենք՝ առաջին-այնտեղ, ուր մի մարդկային համայնքի տեղափոխութեան անօթները և ճանապարհները մի օտար կուլտուրայի ոչ թէ եզակի մօմենտները, այլ ամբողջութիւննեն առաջ բերում. մի միտումն է իշխում այս կուլտուրայի ոչ թէ եզակին, այլ ամբողջութիւնը վերցնել և իւր սեփական կուլտուրայի հետ ձուլել. երկրորդ-այս միտումը միայն այն պայմաններում է գործում, երբ օտար կուլտուրան համեմատած սեփականի հետ հոգեկան ուժի աստիճանների տարբերութիւն չունի, որը այնքան մեծ լինի, որ երկու կուլտուրաների համեմատութիւնը անկարելի լինի։

Այս երկու եզրակացութիւններն էլ յամենայն դէպս մինչև այժմ եղած ծանօթ պատմական փաստերով հաստատւում են։ Մանաւանդ պատմական երևոյթներից մինչև այժմ ամենից յայտնին այն է, որ ցած կուլտուրա ունեցող ժողովուրդները բարձր կուլտուրայի տարրեր ներմուծելով իրենց մէջ ոչնչանում են և այս բարձր կուլտուրա ունեցող ժողովրդի ցածր կուլտուրայի նոյն իսկ եզակի տարրերը դժուարութեամբ են ըմբռնում։ Աւելորդ է ասել, թէ ո՞ր աստիճան մեծ նշանակութիւն ունեն երկու պնդումները. առաջինը պարզում է տիեզերապատմական կապակցութեան օգտակար ընդհանուր օրէնքը. երկրորդը ցոյց է տալի որքան այս կապակցութեան մէջ եղ-

կի մարդկային համայնքների, ուրիշ խօսքով կուլտուրական ժամանակների յաջորդականութեան ներքին սօցիալ-հոգեկան զարգացումը ճշտում է։ Արդիւնքը ուրեմն համամարդկային պատմական կապակցութիւնն է, որ կախումն ունի մարդկային մեծ համայնքների տիպիկ զարգացման շարքից։

Երբ այս արդիւնքը կայ, հնարաւոր է մարդկային համայնքների մէջ եղած հոգեկան ազդեցութիւնների մասին մի աւելի ուղղակի ու ընդհանուր բան ասել։ Վճռական հարցը այն է ի հարկէ, թէ ինչ յարաբերութեան մէջ են այսպիսի տեղափոխութիւնները կուլտուրական ժամանակի ներքին հոգեկան մեխանիկայի հետ։ Պարզ եզրակացութիւնը հաստատում է, որ գործողութեան սկզբունքն է իշխող, որը անհատական, այլ և սօցիալ-հոգեբանական օրէնքներից ենք հանել։ Այս մեխանիկան կուլտուրական ժամանակների շարքից խիստ կախուած է և կարող է թէթև շեղումներ ու տարբերութիւններ ունենալ, յատկապէս այդ միտումը կուժեղանայ, բայց երբէք ոյժ լինելուց չի դադարի։ Այս նման է եզակի մարդու կեանքում դրսից եկած հոգեկան ազդեցութիւններին․ ի հարկէ կարող են սրանք մեծ նշանակութիւն ունենալ, բայց մեկուսացնել այն հոգեկան մեխանիկան, որի համաձայն երեխայի հոգեկան կեանքին հետեւում է այրականը և ապա ծերութիւնը, սրանց ոյժից դուրս է։

Ընդհանրապէս հոգեբանօրէն կարելի է եզրակացնել, և այս եզրակացութիւնը հաստատւում է փորձառութեամբ, որ արտաքին սօցիալ-հոգեկան ազդեցութիւնները, որոնք երբ և իցէ հոգեկան մեխանիկայի ներսում եղող օրէնքին հակառակ մի անգամ աններդաշնակ, մի այլ անգամ կեդրոնացող միտումն են առաջ բերում, ոչ մի աչքի ընկնող ազդեցութիւն չեն ունենում․ յամենայն դէպս նրանց ազդեցութիւնը աւելի մեծ է, երբ նրանք այն միտումի ճանապարհով են լինում, որը հոգեկան մեխանիկայի ընթացքում իշխող է։ Յատկապէս եղած հոգեկան կապակցութեան աններդաշնակութիւնը, ընդ սմին մի կուլտուրական ժամանակի անցնելը սրանց շնորհիւ ամենից զօրեղ կերպով առաջ կքաշուի։ Ինչ արժէք է ունեցել օրինակ հռոմէական վերածնութիւնը 13-ից մինչև 16-րդ դարը եւրոպական

անհատականութեան զարգացման համար. ինչ հելլենական վերածնութիւնը 18-րդ դարում գերմանական անձնականութեան ծաղկման համար։

Ոչ միայն աններդաշնակութեան մոմենտի, այլ և ոչ պակաս կեդրոնացմանի համար արտաքին ազդեցութիւնները, իբր հոգեկան մեխանիկային զուգահեռաբար են գնում, մեծ արժէք են ունենում. Նոյն հոգեկան տարրերի վերլուծութեան մէջ, որոնք սոցիալական հոգու մէջ ծագում են շնորհիւ աններդաշնակութեան ժամանակի նոր գրգիռների ահագին քանակութեան, նրանք պակաս մուտք են ունենում։ Այն պատերազմը, որը այստեղ նոր գերիշխող ոյժի առաջ գալու համար ամենից խորը և իւր սաղմնային դրութեան մէջ տեղի է ունենում, գլխաւորապէս բնածին ու ներքին զարգացումից առաջ եկած միջոցներով ու ոյժերով ետ է մղւում։ Այս կապակցութեան և սրա հիմք կազմող աւելի խորը պատճառների վրայ հիմնուած է երևում այն, որ միանգամ եղող գերիշխող ոյժի հիմնական միտումը արտաքին ազդեցութիւնների շնորհիւ չի մեծանում։ Այս դէպքում առնուազն պարզաբանող ազդեցութիւնը չի բացասում մի անգամ գծուած բնածին զարգացման ընթացքը։ Օրինակ Փռանկեան ու կարօլինգեան զարդաքանդակի պրոցեսը, որը վերաբերում է միջնադարեան տիպիկ կեանքի անցմանը, դասական զարդաքանդակի պարզաբանող ազդեցութեան շնորհիւ աւելի բարեյաջող դրութիւն ստացաւ։ Նոյնպէս անհատականութեան էական վերլուծական տարրերի lumen naturel-էի մշակումը նոյնպէս և բանականութիւնը, իրենց, համեմատաբար արագ ընթացքը պարտական են դասական փիլիսոփայութեան, յատկապէս ստօյիկեան փիլիսոփայութեան 15 և 16-դ դարերի վերածնութեանը։

Հոգեկան մեխանիկայի ընթացքի ուղղութեան տեսակէտից նայած, մինչև այժմ պարզած ազդեցութիւններից երևում է, թէ երբ օտար ազդեցութեան շնորհիւ ներքին սոցիալ հոգեկան զարգացման ժամանակաչափը արագանում է։

Օտար ազդեցութիւնները նոր գերիշխող ոյժ կազմելու վերլուծական կողմի վրայ ունեցած ազդեցութիւնից աւելի մեծ

ոյժ ունենում են, ինչպէս երեւում է համադրական կողմի վրայ Անցեալ ժողովուրդների կուլտուրական ժամանակների հոգեկան բնոյթի մասերը և ամբողջութիւնը նրանց շրջանում կարող են միաժամանակ նորից յարութիւն առնել, եթէ իհարկէ նոր կազմուող դերիշխող ոյժի հետ ներդաշնակեն, այնպէս որ այս պրոցէսսի շնորհիւ անցեալ հոգին նոր կազմուող կեանքի հետ որակով համապատասխանելով, պատուաստուել, կպչի։ Բնական է, որ առանց դժուարութիւնների չի լինի. ուժեղ ազդեցութեան դէպքում ծագում է մի տեսակ սօցիալ-հոգեկան անմարսողութիւն և մեծ պատմագրական արուեստ է պէտք, այդպիսի մի պրօցէսը իւր անվերջ խճողումներով ու շրջաններով ուղիղ, այսինքն այնպէս, որ ընթերցողը կարողանայ պարզ տեսնել—նըկարագրել։ Սակայն և այնպէս վերջ ի վերջոյ սօցիալական հոգու որոշ մասեր նոր ծագող երկրորդ հոգու մէջ սաղմեր են ձգում։

Սա վերին աստիճանի կարևոր, յատուկ մտքով ասած տիեզերապատմական մի պրօցէս է. սրա մէջ յարատեւում են անցեալ ժողովուրդների անհատականացման կարևոր կտորները. Նրա մէջ վերջապէս անմահ է այն, ինչ որ երբեմն մարդկային է եղած։

Սա մի այդպիսի երևոյթ է, որը մեզ միանգամ էլ առիթ կտար յետադարձ հայեացք ձգելու մեծ մարդկանց, հերոսների արած ազդեցութեան բնոյթի վրայ։ Արդեօք սրանք այդ ազդեցութիւններ կրողները չեն, որոնք որովհետև անհատական են, համեմատած սօցիալական հոգու հետ մի տեսակ կէս օտարոտի բան ունեն իրենց մէջ։ Նրանց գործունէութիւնը այս տեսակէտից արդեօք չի ենթարկուելու մի այնպիսի բանի հետազօտութեան, որպիսին է արտաքին մեծ ազդեցութիւնը։ Այսպիսով սրանց համար էլ արժէքաւոր է այն, որ ինչոր նըրանք իրենց ունեցածի ամբողջութեանը պատուաստել են, անմեռ է և ապրում է դեռ այս ամբողջութեան ուրիշ ժամանակների ու տարածութեան սօցիալական հոգիների վրայ արած տիեզերապատմական ազդեցութիւնների մէջ։

Մի՞թէ այս դէպքում հետազօտութիւնը պէտք է կանգ առնէ. արդեօք կա՞յ մի հիմնական տարբերութիւն հերոսի հոգու և մարդկային համայնքի ամենացածր տեղում, գործող և

գուցէ դեռ ազդեցութեան ընդունակ անդամի հոգու մէջ։ Ո՛չ. ինչպէս որ մենք բոլորս մարդիկ ենք, այնպէս էլ մեր բոլորիս մէջ կայ ստեղծագործութեան մի կայծ, թէկուզ սա հէնց կերպարանափոխուող նմանողութեան մի կայծ լինի։ Այս կայծի շնորհիւ մենք բոլորս էլ մեր սեռի պատմութեան յաւիտենականութեան բաժին ենք դառնում։

Ժամանակ է այս ընդհանուր հետազօտութիւններից եզրակացութիւններ հանելու, թէ մեր ժամանակում, ի՞նչպէս պէտք է պատմութիւն գրել. ընդունելով իհարկէ այս հետազօտութիւնների նշանակութիւնը, որքան սրանք լաւ են պահուած և սրանց, իհարկէ դեռ ևս քննուելիք, հաւաստիութիւնը հիմնուած է ենթադրութիւնների վրայ։

Այժմ պարզ երևում է նախ այն բանը, որ ամէն մի եզակի անցքի նշանակութեան պատմական մասի համար տեղեկութիւն ունենալը և նրա պատմական արժէքը որոշելը հնարաւոր է ամենարնդհանուր սկզբունքներով, այս նշանակում է տիեզերապատմական մօմենտով։ Սրանք մեծ փորձառութեան մէջ այնպէս են ընթանում, որ տիեզերապատմական կապակցողը, համաշխարհային կապի արժէքը ոչ այնքան երկրի պատմական եղելութեան մէջ պէտք է փնտրել, այն տարրերում, որոնց տեղափոխութիւնը ժամանակի ու տարածութեան միջով ճանապարհ ընտրելու և պատրաստի անօթներ գտնելու դժուարութեան առաջ խորտակւում է, այլ պէտք է հոսող, թեթև տարրերի մէջ փնտրել, որոնք տիեզերապատմական տեսակէտից առաջին տեղն են բռնելու։ Այս տարրերը բարձր հոգեկան գործունէութեան տարրեր են. բարոյականութեան ու կրօնի, աւելի ևս գեղարուեստի, բանաստեղծութեան ու գիտութեան տարրեր, որոնք աւելի ճիշտ են որոշում համաշխարհային պատմութեան կապը։ Սրանց կողքին քննութեան են առնւում նաև քաղաքական կազմակերպութիւնը, սօցիալական դասը և տրնտեսական կեանքը. հասկանալի է, որ սրանց ընդարձակ ազդեցութեան մասին ոչ մի կասկած չկայ։

Որովհետև ամէն մի պատմական եզակի անցք այս բարձրագոյն սկզբունքներով պէտք է գնահատել, ուրեմն մասնաւոր

պատմութիւնը, ամենից առաջ եզակի ազգերի պատմութիւնը ոչ թէ տնտեսական սօցիալական կամ պետական կազմակերպութեան մօմենտներով պէտք է գնահատել, այլ միայն հոգեկան բարձր գործօնների պատմութեան տեսակէտից պէտք է արժէքաւորել և կարգաւորել, այլապէս ուղիղ չէր պարզաբանուի թէ եզակի մարդկային համայնքները տիեզերապատմական ինչ նշանակութիւն են ունեցել և ինչ նշանակութիւն ունին։ Այս տեսակէտից կուլտուրական ժամանակների բնոյթի և ընթացքի տեսութիւնը, նոյնիսկ այն ժամանակ, երբ համոզմունք կարող է առաջ գալ, որ այս բնոյթքը և ընթացքը ամբողջապէս տրնտեսական և սօցիալական քաղաքական տեսակէտից է որոշւում, չպէտք է տնտեսութեան կամ սօցիալական պատմութիւնից իբր խմորող տարրից, սկզբունք հանել, բաժանման սկզբունքը պէտք է բարձր հոգեկան կեանքից հանել. ոչ թէ նրանց արմատների, այլ նրանց ծաղկման տեսակէտից պէտք է կարգաւորուեն և սահմանաւորուեն կուլտուրական ժամանակները։ Մանաւանդ որ նախկին պարզաբանութիւնների հիման վրայ հաստատուած է, որ ծաղկման երևոյթների սահմանաւորումով միաժամանակ իրարից բաժանւում են նաև խոր արմատ ունեցող անցքերը։ Բարձր հոգեկան կեանքում երևում են կրկին դէպքեր ու անցքեր մաքուր երևակայութեան գործունէութեան, բանաստեղծութեան, երաժշտութեան և մանաւանդ ձևակերպող արուեստի մէջ. կարծես հէնց միայն բաժանման սկզբունքները պարզելու համար ստեղծուած լինին, գործնական և տեսական հիմքերով, որոնց հետ շուտով կը ծանօթանանք։ Այս բոլոր սկզբունքներից յետոյ կառուցուած է կուլտուրական ժամանակների համար այն գրական ուսմունքը, որը ես իմ մինչև այժմ կատարած աշխատանքում յատկապէս առաջին անգամ գերմանական պատմութիւնից եզրակացնել կարողացայ։

Pessimist

(Վերջը միւս անգամ)

# ԳԱՐՈՒՆ Չ'ՏԵՍԱԾ

*Դեռ ես չ'տեսած կեանքիս գարունը,*
*Յաջորդեց իսկոյն թօշնած աշունը։*
*Կեանքն է՝ փոթորիկ, մրրիկ, բուք, բորան.*
*Որոտ ու կայծակ—սարք ու գարդարանք։*

*Ցօղն ու անձրև, սելաւն ու կարկուտ,*
*Կեանքի արհաւիրք—գրոյց, բամբասանք.*
*Կամար ծիածան, երփներանգ գոյնով*
*Սէր, ուրախութիւն մարդկանցը բերկրանք։*

*Բայց այդ ամենին պէտք է դիմանալ,*
*Ինչպէս ժայռերը՝ կայծակի շանթին.*
*Ինչպէս կտրիճը, արեան մեծ ծովում*
*Ասպարէզ գալով—առաջ է վազում։*

*Տատասկ է բուսած մեր ճանապարհին*
*Տատասկը՝ պսակ, մեր շիրիմներին։*
*Եւ փոթորկալից, կեանքը մեր բաժին,*
*Հանգիստ է զգալու՝ յանձնելով հողին։*

*Ուրեմն լա՛ւ չէ, անվախ, անտերունջ՝*
*Կռուել արիւնոտ—կռուի լայն դաշտում.*
*Գոնէ վաստակենք՝ անուն հերոս քաջ*
*Այդ է մնալու—անկուշտ աշխարհում։*

**Արամ Վերդեան**

# ՄԻԱԿ ԵԼՔԸ

Կ. Պոլսից հասած լուրերը չափազանց վհատեցուցիչ են։ Հոկտեմբեր 13-ին Ղալաթիոյ ս. Լուսաւորիչ եկեղեցու բակում, ուր գտնւում է խորհրդարանը, կատարուել է մի վայրենի դէպք։ Ազգային վարչութեան ատենապետ բժ. Սեդրոսեան խորհրդարանից դուրս ելնելով, սրա առաջն է դուրս գալիս Ենոք Եփրանոսեան անուն մէկը և ուսուցչական խնդրի առթիւ բացատրութիւն է պահանջում, բայց ստացած բացատրութիւնից դժգոհ մնալով, ձեռնափայտով երկու հարուած է իջեցնում ատենապետի գլխին։

Իսկ այդ Ենոք Եփրանոսեանը հասարակ մարդ չէ, Պոլսի խմբլներից ու Թուլումբաջիներից չէ, այլ ուսուցիչ է, մէկը Թրքահայ մտաւորականներից։

Այս վայրենի դէպքը, որ ոչ առաջինն է և ոչ վերջինն է լինելու, ահաբեկում է ազգային վարչութեան անդամներին և նախագահը՝ պատրիարք Դուրեանը պնդում է հրաժարականի վրայ, նախապէս մի շատ բնորոշ ճառ արտասանելով։

Այս դէպքը ակամայ յիշեցնում է մեզ նոյն Ղալաթիոյ խորհրդարանի բակում ս. Օրմանեանի դէմ կատարուած աւելի քան վայրենի բռնութիւնը, որպէս և Բիւզանդ էֆ. Քէչեանի կրած ծեծն ու անպատւութիւնը։

Ի՞նչու այն ժամանակ Ս. Դուրեանը, որ ս. Օրմանեանի օրօք պատրիարքական տեղապահ, իսկ Քէչեանի օրօք Պոլսի Հայոց պատրիարք էր, վրդովման ոչ մի նշան ցոյց չը տուեց, ինչո՞ւ այն ժամանակ հրաժարականի հարց չը բարձրացրեց։

Ոչ միայն այս, այլև իւր խորհրդաւոր լռութեամբ ակներև կերպով քաջալեր հանդիսացաւ կրկնակի տխուր դէպքերին։

Դեռ շատ մօտիկ անցեալում Թիւրքիայի հայոց կեանքի ղեկը վարող ամբոխը, անշուշտ ուսուցիչ Եփրանոսեանների և փաստաբան Սուրէնեանների դրդմամբ ս. Օրմանեանին կրկնակի խայտառակութեան պիտի ենթարկէր, եթէ նա չշտապէր փախուստ տալ եկեղեցուց։ Եւ չը նայելով որ այս անգամ ս. Օրմանեանը եկեղեցի էր եղել հէնց պատրիարք Դուրեանի հրաւիրանօք, այնուամենայնիւ պատրիարքը ոչ միայն հրաժարականի հարց չը բարձրացրեց, այլև հասարակ բողոք անգամ չարեց այդ անիրաւ բռնութեան դէմ։

Իսկ այժմ Կ. Պոլսից հասած հեռագրական և լրագրական լուրերը այլևս կասկած չեն թողնում, որ ս. Դուրեանը հրաժարական է տուել ազգային Երեսփոխանական ժողովին։

Ի՞նչու. արդեօք Սեղբոսեան էֆ. գլխից հոսող արիւնը աւելի ծա՞նր է ազդել նրա բանաստեղծական սրտին, քան ս. Օրմանեանի արցունքները, թէ՞ այժմեան վայրենի դէպքի մէջ աւելի մեծ անարդարութիւն կայ, քան նախնթաց վայրենի դէպքերի մէջ։

— Ո՛չ։

Սրբազան Դուրեանը իւր երկամեայ պատրիարքութեան ընթացքում շատ անգամ ցոյց տուեց, որ հանգուցեալ Աշըրղեանի հարազատ ձեռնասունն է, նրա հոգով կրթուած, նրա չափ սիրահար պատրիարքական գահին և նրա չափ անտարբեր դէպի հասարակական չարիքները, որոնք, շնորհիւ սահմանադրական ազատութեան, աւելի համարձակ են անում։

Այո՛, սխալ կը լինի պատրիարքի հրաժարականի շարժառիթը Սեղբոսեան էֆէնտիի գլխից հոսող արեան մէջ որոնել։

Այդ արիւնը մի պատրուակ է, որ վրայ հասաւ շատ տեղին ու ժամանակին։

Սրբազան Դուրեանը յեղափոխական ամբոխի ձեռքով և աջակցութեամբ էր, որ պատրիարքական գահը բարձրացաւ։ Եւ որովհետև նա այդ պատասխանատու պաշտօնը վարելու համար կոչուած չէր, ուստի շուտով խաղալիք դարձաւ աջից ու ձախից փչող հովերին։ Ինչպէս որ սպասելի էր, նա իւր քաղաքականութեամբ ներքին պայմանների կծիկը այնպէս խճճեց,

որ ինքն էլ նրա մէջ չը խճճուելու համար մնացել էր մի ելք միայն—հրաժարուել գահից:

Եւ շտապեց հրաժարական տալ, Սեղբոսեան դէպքից օգտուելով:

* * *

Սրանից շատ առաջ, երբ մի յայտնի խմբակ ամէն տեսակ ներելի ու աններելի միջոցներով աշխատում էր յառաջ քաշել ս. Դուրեանի թեկնածութիւնը կաթողիկոսական գահի համար, իսկ Կովկասի հայ պատգամաւորներն էլ անգիտակցաբար արձագանք էին տալիս այդ խմբակի միտումնաւոր ջատագովութիւններին, տողերիս գրողը ճիշտ ժամանակին «Հայրենիք» շաբաթաթերթի և «Մեր-Ձայնը» լրագրի էջերում շեշտեց այդ արհեստական կերպով անզուգականացրած հոգևորականի թուլութիւնը, երևան հանելով նրա անցեալ գործունէութեան բնորոշ գծերից մի քանիսը:

Այնուամենայնիւ կաթողիկոսական գահը բարձրացնել չը յաջողելուց յետոյ, նոյն խմբակի շնորհիւ, մեր Պոլսի ազգայինները, որոնք մարդուն ճանաչում են նրա կրունկներից, շտապեցին նոյն Դուրեանին պատրիարքական գահը բարձրացնել, չը նայելով որ նրա տեղապահութեան օրերից արդէն գիտէին, որ նա բարձր ու պատասխանատու պաշտօններ վարելու կոչուած չէ, որ չունի քաղաքագիտութիւն, չունի վարչական ընդունակութիւն, չունի նոյնիսկ սեփական կամք, որ անհրաժեշտ է պատրիարքական գահի հեղինակութիւնը ճանաչել տալու համար, այլ նա մի բարի մարդ է և ունի գրական արժանիքներ:

Արդէն նրա պատրիարքական գործունէութիւնից գիտենք, որ պատրիարքական գահի հեղինակութիւնը վայր ընկաւ ոչ միայն Թիւրք և օտար պետութիւնների աչքում, այլև Թիւրքիայի հայ ժողովրդի աչքում:

«Լումայ»-ի աշխատակիցը, նրա ներկայ տարուայ յունուարի համարում խօսելով Ադանայի դէպքերի առթիւ պատրիարքի տուած հրաժարականի մասին, նա Պոլսի Հայոց Ազգային Երեսփոխանական ժողովին խորհուրդ էր տուել պատ-

րիարքական ընտրութեան ձեռնարկելու, ս. Դուրեանի վերադարձը նուաստացուցիչ համարելով։

Ոչ մի տեղ սահմանադրութիւնը այնքան քայքայիչ ազդեցութիւն չէ ունեցել հպատակ ազգերի ազգային ամբողջութեան, միութեան վրայ, որքան Օսմանեան սահմանադրութիւնը ունեցաւ բացառապէս Թիւրքիայի հայերի վրայ։ Այդ սահմանադրութիւնը մի հարուածով խորտակեց այն բոլոր օղակները, որոնցով կապուած, շղթայուած հայը մի ամբողջութիւն էր կազմում։ Տեղի ունեցան անակնկալ շերտաւորումներ՝ ոչ միայն քաղաքական աշխարհահայեացքների, այլև ցեղական, ազգային, կրօնական և մինչև անգամ ընտանեկան։ Հոգեկան զգացմունքների, մտաւոր ըմբռնումների և քաղաքական ու հասարակական աշխարհայեացքների յեղաշրջման, էվօլուցիայի այս կրիտիքական շրջանում անհրաժեշտ էր մի այնպիսի լուսաւոր միտք, հեղինակաւոր ոյժ և փորձառու ղեկավար, որ կարողանար իւր հզօր ափի մէջ պահել շերտաւորումների սանձը, թոյլ չը տար, որ միմեանց լափեն, կլանեն ու տրորեն, որպէս անում են այժմ Թիւրքիայի հայերը։

Սր. Դուրեանը այդքան խոշոր և պատասխանատու պաշտօն կատարելու համար կոչուած չէր, թէև ընտրեցին։ Եւ նա ոչ միայն այդ էվօլուցիայի սանձը իւր ձեռքը հաւաքելու ոյժը չունեցաւ, այլև յարուցեց եկեղեցիների «Բաց ու Գոց»-ի խնդիրը, որը ոչ միայն արիւնային ընդհարումների պատճառ դարձաւ, այլև այդ քայլին զոհ գնաց և՛ ինքը և՛ ազգային վարչութիւնը։

Արդ՝ քանի որ ս. Դուրեանը իւր ստեղծած դրութեան լրջութիւնը և վտանգաւորութիւնը ըմբռնելով հրաժարականի հարց է բարձրացրել և ըստ հեռագրական տեղեկութեան՝ հրաժարական է տուել, Ազգային երեսփոխանական ժողովին ուրիշ բան չի մնում անել, եթէ ոչ ընդունել հրաժարականը և փութալ պատրիարքական ընտրութեան ձեռնարկելու։

Պէտք է խոստովանել, որ Պոլսի մեր ազգայինները պատրիարքական ընտրութեան գործում պիտի հանդիպեն լուրջ արգելքների։ Նրանք արդէն գիտեն և տեսնում են, որ Օսմանեան սահմանադրական կառավարութիւնը յայտնի տրամադրութիւն

է ցոյց տալիս հպատակ ազգերի ունեցած իրաւունքների ու արտօնութիւնների փշրանքներն էլ յետ խլելու։ Ոչ ոք չի կարող երաշխաւորել թէ Փէների պատրիարքարանի դէպքը Գում-Գաբուի պատրիարքարանի վերաբերմամբ ևս չի կրկնուի։ Փէների պատրիարքարանը իւր թիկունքին ունէր ազատ և անկախ Յունաստան, որ յամենայն դէպս պատկառելի ոյժ է ներկայացնում։ Գում-Գաբուի պատրիարքարանը իւր թիկունքին ոչոք չունի. Նա միայն է և միայն պէտք է մաքառի թէ՛ արտաքին թշնամիների և թէ ներքին բռնութիւնների դէմ։

Այսպիսի պայմաններում պատրիարքի անձնական արժանաւորութիւններից այնքան շատ բան է կախուած, որ Ազգային Երեսփոխանակ. ժողովը չի կարող հաշուի չառնել։

Այնինչ Թիւրքիայի հայ հոգևորականների շարքերում չը կան արժանաւոր պատրիարքացուներ, բացի ս. Օրմանեանից։

Այո՛, Մաղաքիա սրբեպ. Օրմանեանն է, որ իւր բազմակողմանի կրթութեամբ, իւր հմուտ քաղաքագիտութեամբ և դիւանագիտական բազմամեայ փորձառութեամբ կոչուած է պատրիարքական իշխանութեան գլուխն անցնելով իւր ձեռքն առնելու Թիւրքիայի հայերի կառավարութեան պատասխանատու ղեկը։

Նամակս վերջացնելու վրայ էի, երբ «Մշակ»-ի Կ. Պօլսի թղթակիցը իւր Հոկտեմբեր 28-ի նամակում շօշափելով պատրիարքի հրաժարականի հարցը, ի միջի այլոց աւելացնում է. «Օրմանեանի առջև ամեն անցք փակուած կերևի դէպի պատրիարքական աթոռ»։

Սա այնքան սխալ է, որքան սխալ կը լինի կարծել, թէ մի խուժանային խմբակ իւր խուժանապետներով հանդերձ հայ ազգ են ներկայացնում։ Եթէ Թիւրքիայի մեր ազգայինները պատրիարքութեան նման մի կարդինալ հարցում կառաջնորդուին միքանի փողոցայինների բնազդներով և քաջութիւն չեն ունենայ իրենց կամքը գործադրելու, այն ժամանակ Թիւրքիայի հայութիւնը մեռած պէտք է համարել։

Բայց մենք տրամադիր ենք հաւատալու, որ Թիւրքիայի հայութիւնը մեռած չէ, որ նա Սուրէնեաններից ու Եփրանո-

սեաններից, իրենց ամբողջ հետեւորդներով, շատ աւելի ուժեղ է և կարող է իւր վճիռը, կամքը յարգել տալու։

Եւ մենք կրկին կը շեշտենք. եթէ կայ Թիւրքիայի հայոց հոգեւորականութեան մէջ մէկը, որ կոչուած է Թիւրքայի հայոց հասարակական, կրթական, քաղաքական և այլ պահանջներին բաւարարութիւն տալու—դա Մաղաքիա արքեպ. Օրմանեանն է։

Իսկ Թիւրքայի հայերը, յանձին Ազգային երեսփոխանական ժողովի, Թոյլ չը պիտի տան, որ պատրիարքական աթոռի ճանապարհը արժանաւորների առաջ փակուի և այն՝ արհեստական պատուարներով։

Mars

---

# ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿՆԵՐ

'Պայծառաշուք պայազատ Աղա Կարապետ Յայրապետեանց

## ԱԶԳԱՍԷՐ ԻՇԽԱՆ

Հոգի հայրենասէր, դուք Խրիմեանին և Խրիմեան ձեզ քաջածանօթ էք, 1861-ին մինչդեռ հայաստանի Արծիւր տփխիսի բէմերու վրայ հայրենասիրութիւն կը քարոզէր այն օրէն անա ձեր համբաւ և փարկումն արձանագրուած է առ Մեզ։ Այդ հէք Արծուին, այդ անձնանուէր վարդապետի ուր կը Թափառի այժմ գիտէ՞ք արդեօք։ Ահաւասիկ ձայն կուտամ ձեզ, տարօնոյ աշխարհ, Մշոյ սուրբ Կարապետի Վանուց մէջ ամենայն աշխատութեամբ կը տքնի այդ վանք, այդ մեր նախնեաց 1500 տարուան վաղեմնի յիշատակը վերանորոգել նիւթական և միանգամայն բարոյական շինուածովք։

Մեր այս ձեռնարկութեան սատար և օժանդակ ձեռն ըլք են, եթէ ոչ նախիջևանցի բարեյօժար ազգայինք։ Ուստի յանուն սուրբ Կարապետի Վանուց բարեպաշտ գումար մի պատրաստելով ղրկեցի տեղւոյդ վսեմ քաղաքապետին ձեռք և քանի մի գլխաւոր անձանց հարկ եղած նամակները ուղղեցի, այս ձեռնարկութեան մէջ կաղաչեմ ո՜վ բարեացակամիշխան որչափ հնար է ձեր յորդոր և ազդեցութիւն 'ի գործ դնելու շնորհ ընէք, Թերևս բաւական Գումար մի հայթայթուելով սուրբ

*կարապետի Վանուց վերանորոգութեան սկզբնաւորութիւն աւարտի որ այն իսկ է ընդհանուր ազգին փափագը և մեր նպատակը։*

*Որով կ՚մնամ ձեզ և Հայրապետեան գերդաստանին Աղօթանուէր առ տէր*

*1869 յունիս 7*
*ի սուրբ Կարապետի վանս*

**պաշտօնեայ Գլկյ վանից**
**Մկրտիչ վ. Խրիմեան**
**եպիս. Տարօնոյ**

*Այս Թուղթը մենք ստացել ենք Նոր-Նախիջևանցի պ. Կարապետ Թիթրեանից, որ իբրև Հայրապետեանի փեսայ միջոց է ունեցել աչքի անցկացնել հանգուցեալի Թղթերը և այս Նամակը գտել, յանձնել է մեզ, իրաւունք տալով հարկաւոր համարուած դէպքում հրատարակութեան տալու դրան.*

*Հայրապետեանցը Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ և Միքայէլ Նալբանդեանցի մտերիմ բարեկամ յայտնի Կարապետ Հայրապետեանցն է, որ իւր ժամանակ մեծ դեր է խաղացել Նոր-Նախիջևանի և Նալբանդեանցի կեանքում իբրև հակառակորդ Խալիբեան դպրոցի հիմնադիր Յարութիւն Խալիբեանի և պաշտպան ու կուսակից Տէր Գաբրիէլ Պատկանեանցի և Նալբանդեանցի։*

*Ուշադրութեան արժանի կէտը այս Թղթի մէջ, բացի դրութեան առանձնայատուկ ոճից ու ձևից, այն է, որ, նախ, Գլակայ վանից պաշտօնեայ, Եպիսկոպոս Տարօնոյ Մկրտիչ վարդապետ Խրիմեանը իրան կոչում է ոչ սովորական «Արծիւ Վասպուրականի», այլ «Արծիւ Հայաստանի» և, երկրորդ, որ այդ «Հէք Արծուին» ինքն իւր բերանով իւր համար վկայում է, Թէ ինքն «անձնուէր վարդապետ» է։*

*1910 Թ. նոյեմբ. 28.*
*Նոր-Նախիջևան։*

**Ե. Շահազիզ**

---

# ՊԷՏՔ Է ԶԳՈՅՇ ԼԻՆԵԼ

Ներկայ թուականը մերկացումների թուական եղաւ։ Մերկացումներ գողութեան, խարդախութեան, դրամաշոր-թութեան, կաշառակերութեան, լրտեսութեան և այլ այս կարգի ստոր յանցանքների մէջ։ Եւ դատապարտութեան սիւնին մեխուեցին, ոչ թէ հասարակութեան ստորին խաւի ներկայացուցիչները, այլ ինտելիգենտ մարդիկ, սկսած յեղափոխութեան առաջնակարգ ներկայացուցիչներից, մին-չև պետական բարձրաստիճան պաշտօնեաները։

Մենք հայերս էլ, կամայ թէ ակամայ վարակուեցինք նոյն ախտով, մեզանում էլ երևացին նոյն յանցանքները կամ յանցանքների մերկացումներ, ուր դարձեալ հանդէս են գալիս խիստ ծանօթ դէմքեր, ժողովրդի խաւից միշտ բարձր կանգնած դասակարգերից։

Բայց ամենից անակնկալը և ապշեցուցիչը պ. Սպան-դար Սպանդարեանի դէմ յարուցուած մեղադրանքն է, Դաշնակցութեան օրգանի—«Դրօշակ»-ի կողմից։

«Դրօշակ»-ի ասելով 1904 թուականի յունվարից ի վեր «Նոր-Դար»-ի խմբագիր Ս. Սպանդարեանը պարա-պելիս է եղել լրտեսութեամբ, ստանալով կառավարու-թիւնից յայտնի վարձատրութիւն։

Սպանդարեանը լրտե՞ս. ի՜նչ դառն ու սոսկալի հիա-սթափութիւն նրա թերթի «Նոր-Դար»-ի աշխատակիցների մէջ։ Տասնեակ տարիների ընթացքում մենք գրկել էինք «Նոր-Դար»-ը որպէս մի իդէալական սրբութիւն, բայց դուրս է գալիս, որ մենք խաբուած ենք եղել, իդէալական սրբ-բութիւն ասածդ եղել է մի գարշելի ու թունաւոր սև օձ։

Բայց ճի՞շտ է մեղադրանքը, իրա՞ւ է, որ անհերքելի ու ջախջախիչ են փաստերը։

*Սա այն տարակուսական հարցերից մէկն է, որ համ փափագում ես լուծուած տեսնել, համ էլ զարհուրում ես նրանից։*

*Փափագում ես՝ լսելով խղճիդ ձայնին, որ մրմնջում է քեզ «Դա զրպարտութիւն է». զարհուրում ես՝ նայելով մարդկային կեանքի բարոյական անանկութեան, ապականութեան վրայ, որ կասկած է զարթեցնում քո մէջ թէ՝ Սպանդարեանն էլ կարող է մէկը լինել այդ բարոյական անանկներից։*

*Ոչ պաշտօնը, ոչ կոչումը, ոչ փառաւոր անցեալը, ոչ իսկ անաղարտ համբաւը և ոչինչ այլևս չեն կարողանում փրկել մարդուն ծանրագոյն ամբաստանութիւններից. սրանք այլևս ամենազօր փաստեր չեն, որոնց վրայ հիմնուելով մարդս կարողանար վստահօրէն ասել «Դուք սուտ էք խօսում, ստոր զրպարտիչներ էք։*

*Սա մի այնպիսի դրութիւն է, երբ պանջւում, տառապում են մարդուս հոգեկան զգացմունքները և տառապում են այն սարսափելի համոզմունքից, թէ չը կայ այլևս ոչ մի սրբութիւն։*

*Բայց որքան խոր ու անծայրածիր է այդ տառապանքի ովկիանոսը, այնուամենայնիւ մարդս յուսահատական ճիգ է գործ դնում նրանից ազատուելու, աշխատում է գտնել նորանոր փաստեր իրեն յուսահատութեան ու տառապանքը ծովը նետող փաստերի դէմ կռուելու, նրանց ջախջախելու, աշխատում է իւր կասկածների մռայլ խաւարը փարատող լուսի մի թոյլ ճառագայթ որոնելու համար։*

